№ 42 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 25

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 25 № 42

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն 'րից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Փետրվարի 1-ից մինչև 1 յունիսի 3 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կատարինէ Բաղդասարեանը, Եղիսաբէթ Քալաշեանը, Վարեա, Սերգէյ և Գէորգ Ղուկասեանցները և Իվան Սուլթանեանը ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինը՝ իր թանկագին ամուսնի՝ երկրորդները՝ իրանց սիրելի փեսայի, իսկ վերջինը՝ անմոռանալի ընկեր՝

ՄԻՀՐԱՆ ՍԱՀԱԿԵԱՆ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ

յանկարծակի մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 21-ին, երեկոյեան ժամը 7½-ին վիրաւորվելուց յետոյ: Հոգեհանգիստը, այսօր, շաբաթ, փետրվարի 25-ին, երեկոյեան ժամը 6-ին: Յուղարկաւորութիւնը կիրակի, փետրվարի 26-ին, առաւօտեան ժամը տասին իր բնակարանից (Պանասեվիչա փող. տուն Տուխարելլի № 42) դէպի ս. Կարապետ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: (2) 1—1

Գ. ԵՍ. ԱՒՍԱՐԿԻՍՕՎԻ

ԱՅԳՈՒ ԾԱՌԵՐԻ

ՏՆԿԱՐԱՆ

ծախվում են պտղատու ծառեր արտասահմանեան, ռուսական և կովկասեան տեսակներ: Հասցէն՝ ст. Скра Зак. Жел. Дор. Авсаркисову. Ցուցակը ուղարկվում է ձրիաբար: 9—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քննադատութեան արդիւնքը. Հայ-թուրքական համագումարը. Մտքեր և փաստեր. Հայ-թուրքական բանակցութիւններ Գանձակում. Հայերի բաժանման ու համախմբման հարցը. Անկախների կլուբում ի նպաստ Թիւրքիայի ճնշված ժողովուրդների. Իմ պատասխանը Մանկական Պարտէզի քննադատներին. Նամակ Սղնախից. Նամակ Նուխուց. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ռուսիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Այն բոպէից, երբ հայ-թուրքական խորհրդակցութեան անդամները սկսեցին քննել իրանց առաջադրած ծրագիրների կէտերը, հանդէս եկաւ և բողոքի ձայնը այն բոլոր թերութիւնների և անբարեշինութիւնների դէմ, որոնք տարիներ շարունակ սեղմելով մեր երկրի կեանքը, հասցրել էին նրան ներկայ անմխիթար և թշուառ վիճակին:

Ներկայացուցիչները յայտնեցին որ մեր երկրում տիրում է անհաւասարութիւն և անարդարութիւն տեղացիների վերաբերմամբ: Տեղական իշխանութիւնը տարբերութիւն էր դնում իր հպատակների մէջ, և այն, ինչ որ թոյլատրելի էր համարվում մէկի համար, արգելվում էր միւսի համար:

Ճիշտ է, յաճախ ինքը հիմնական օրէնքը չէր այդ անհաւասարութիւնը և անարդարութիւնը սահմանում, բայց տեղական ազգաբնակութեան համար իրապէս բոլորովին միևնոյնն էր, թէ ով է մեղաւորը, հիմնական օրէնքը թէ՞ մինիստրական շրջաբերականը և կամ վերջապէս կովկասեան իշխանութեան բարեհայեցողութիւնը:

Եւ պարզվեց, որ օրէնքից շեղվող, օրէնքը չճանաչող շրջաբերականների շնորհիւ մեր երկրում ստեղծվել էր վերջ ի վերջոյ մի անտանելի վիճակ, որ դառնացրել էր ազգաբնակութեան կեանքը:

Շնորհիւ անարդարութեան, շնորհիւ շրջաբերականների՝ հալածված էր մայրենի լեզուն դպրոցներից, տեղացիները հեռացված էին թէ պետական ծառայութիւնից և թէ հասարակական գործունէութեան ասպարէզներից, մամուլը, գրականութիւնը, և հասարակական քննադատութիւնը դրվել էին ամենածանր կապանքների մէջ և կամ բոլորովին դուրս էին մղված կեանքից:

Գործում էր ոչ թէ օրէնքը, ոչ թէ արդարութիւնը, ոչ թէ տեղական ինքնագործունէութիւնը, այլ բոլորովին ուրիշ բան, այն է կամայականութիւն, իշխանաւորի բարեհայեցողութիւն և անվերջ բացառութիւնների սիստեմը:

Ժողովրդի ներկայացուցչութիւնը, տեղական ազգաբնակութեան կարծիքը և կարգը արտաքսված էին վարչական և հասարակական ասպարէզներից:

Մարդիկ գուցէ մի կերպ հաշտվէին այդ բոլոր սահմանափակումների հետ, եթէ ինքը վարչութիւնը իր բազմաթիւ օրգաններով, իր պաշտօնեաներով այնքան բաւարար լինէր, որ գոնէ կեանքի տարրական պահանջներին լիութիւն կարողանար տալ, գոնէ ապահովէր մարդկանց կեանքը, ստացուածքը և կենցաղավարութիւնը:

Սակայն մեր երկրի դժբաղդ իրականութիւնը մեր առաջ բացեց մի այնպիսի սոսկալի տեսարան, որ աներևակայելի պէտք է համարվէր նոյն իսկ ենթադրութեան եթերներում: Մինչդեռ մեզ վրդովում էին կեանքի սովորական պակասութիւնները՝ զրկութիւնները, աւազակութիւնները, մասնակի կողոպուտները,—վրա հասան այնպիսի սարսափելի աղէտներ, որոնք միայն պատմութեան սև էջերին են յատուկ և համարվում էին առ միշտ մոռացված և թաղված անցեալի խուլ խորշերում. բռնկվեցին մեծ տարածութիւնների վրա սարսափելի կոտորածներ, կազմակերպված աւերներ, կործանիչ հրդեհներ և կուլտուրայի ոչնչացման դժոխային արհաւիրքներ:

Թուրքերը առաջարկեցին իրանց կողմից ընդհանուր, պարտադիր ուսում, իրաւունքների հաւասարութիւն և մի հայ-թուրքական յանձնաժողով Փոխարքայի դիւանատան մէջ մինչև ընդհարումների վերջանալը:

Հայերը, անկասկած, համակրութեամբ ընդունեցին այդ առաջարկը, մանաւանդ որ հայկական նոյնատեսակ պահանջներ աւելի ևս մեծ ծաւալով ծրագրված էին այն հանրագրի մէջ, որ հայ պատգամաւորները մշակել էին անցեալ տարի և մատուցել կովկասեան Փոխարքային: Հայերը իրանց կողմից աւելի ուժգին կերպով շեշտեցին տեղական վարչական կազմի թերութիւնների վրա և հարց յարուցին նրան վերակազմելու և մի և նոյն ժամանակ որոշ մասնակցութիւն տալու տեղական ազգաբնակութեան ներկայացուցչութեան:

Եւ այդպիսով պարզվեց այն, ինչ որ պարզ պէտք է լինէր միշտ և հանապազ:

Դա այն էր, որ անհաւասարութիւններով, անարդարութիւններով, բարեհայեցողութիւններով և հակասական շրջաբերականներով չէր կարելի կառավարել մի ամբողջ երկիր և բազմաթիւ ազգութիւններ: Ստացվեց այն արդիւնքը, որ և պէտք է ստացվէր—սնանկութիւն և քայքայում:

Այժմ նորից պէտք է շինել, դրստել այն, ինչ որ տարիներ շարունակ կազմալուծվել, քայքայվել և քանդվել է:

Եւ այժմ ինքը իշխանութիւնը կանչել է երկրի ժողովուրդներին՝ նրանց հետ միասին խորհրդակցելու և պարզելու, թէ ինչ միջոցներով կարելի է խաղաղ կեանք ստեղծել և երկրի կուլտուրական բարգաւաճումը ապահովել:

Բայց արդեօք պատմական այս դասը բաւական է և վերջինն է, թէ դեռ մենք պէտք է անցեալի ծանրութեան արձագանքները դարձեալ տեսնենք նորագոյն զգեստների մէջ:

Ա. Քալանթար

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

VII

Փետրվարի 23-ի նիստը

Փետրվարի 23-ին, Փոխարքայի պալատի Դեղին դահլիճում կայացած Համագումարի երրորդ պաշտօնական նիստը ահագին և պատմական նշանակութիւն ունէր: Այդ նիստի մէջ քննվեց մի կարդինալ հարց, հայ յեղափոխական կազմակերպութիւնների և գլխաւորապէս «Դաշնակցութեան» հարցը: Ժամանակ էր, որ վերջապէս հայերը ցոյց տան, բացատրեն թէ կառավարութեան, թէ մեր հարևան թուրք ժողովրդին, թէ այդ «Դաշնակցութիւնը» չէ ստեղծված բնաւ և երբեք կռւելու Ռուսաստանի դէմ, թուրք և օսմանեան ժողովուրդների դէմ, թէ նա երբեք այդպիսի ձգտումն չէ ունեցել, թէ մինչև անգամ եթէ նա այդպիսի ձգտումներ էլ ունենար, նա ոչ մի համակրութիւն, աջակցութիւն չէր գտնի հայ ժողովրդի կողմից, թէ նա արդիւնք է հայ ժողովրդի արդար և դառն բողոքի այն անարդարութիւնների, անգթութիւնների, հարստահարութիւնների դէմ, որոնց ենթակայ է Թիւրքիայում և ենթակայ եղաւ Ռուսաստանում իշխան Գոլիցինի օրով և թէ, վերջապէս, մեր երկրի մուսուլման ժողովուրդը ամենևին ոչ մի երկիւղի տեղիք չունի, թէ «Դաշնակցութիւնը» կարող է որ և է վտանգ սպառնալ նրա գոյութեան: Եւ այդ ամենը ասւեց պալատում, Փոխարքայի բոլոր բարձրաստիճան պաշտօնեաների և մուսուլման ժողովրդի ներկայացուցիչների ներկայութեամբ: Կարծում ենք, թէ բարձր կառավարութեան և թէ թուրքերի ներկայացուցիչները համոզվեցին և հաւատացին մեր հայերիս անկեղծութեան և բացատրութեան:

Այժմ տանք նիստի մանրամասն պատկերը: Նախ և առաջ հաստատենք այն իրողութիւնը, որ այդ նիստը, շնորհիւ գեներալ Մալամայի փափկանկատ, մարդասէր ղեկավարութեան, ընդունեց աւելի սրտագին, աւելի անկեղծ բնաւորութիւն և երկու կողմերից ևս արտայայտվեց խորին, անկեղծ ցանկութիւն՝ իրար հասկանալու, շփման, համերաշխութեան ընդհանուր կէտեր գտնելու, անկեղծութեան, անաչառութեան տարրեր մտցնելու վիճաբանութիւնների մէջ: Տալ բոլոր ճառերի մանրամասն և ստենօգրաֆիկ նկարագրութիւնը՝ անհնարին է. մենք կը տանք միայն տիպիքական բնաւորութիւն ունեցող տեղերը:

Նախագահ Մալամա, ճիշտ ժամը 2-ին բանալով նիստը, առաջարկում է Պետերսօնին կարդալ ծրագիրները: Սա կարդում է նախ թուրքերի, յետոյ հայերի ծրագիրը:

Մալամա: Ի՞նչպէս էք կարծում. արդեօ՞ք հարկաւո՞ր էք գտնում պատճառների հարցը առանձին քննել, ինչպէս գրված է երկու ծրագիրների մէջ ևս, թէ քննել միւս կէտերի հետ, երբ այդ պատճառները կը շօշափվեն:

Ս. Թաղիանոսեան ցոյց տալով, որ շփումներ և ընդհարումներ ազգութիւնների մէջ առհասարակ լինում են և աւելի քաղաքակիրթ երկիրներում, օրինակ Աւստրո-Ունգարիայում և այլն, որ հայերը արդէն առաջին նիստում շեշտեցին թուրք-հայկական արիւնահեղ ընդհարումների գլխաւոր պատճառը և հարկ չեն տեսնում երկար ծանրանալ նաև ուրիշ պատճառների վրա, անհրաժեշտ են գտնում սակայն լուսաբանել այն հարցը, թէ իրանք մուսուլմանները ինչն են համարում ցաւալի դէպքերի բուն պատճառը: Մինչև այսօր մուսուլմաններից և ուրիշներից մենք շարունակ լսել ենք, թէ ընդհարման պատճառը հայ գաղտնի, ոչ-լեգալ կազմակերպութիւնների գործունէութիւնն է: Շատ ցանկալի էր, որ այժմ մուսուլման պատգամաւորները, իշխանութեան առաջ, լուսաբանէին այդ հարցը և ցոյց տային, թէ հայ յեղափոխական կազմակերպութիւնները ինչով են արծարծել այս ընդհարումը:

Հաջիև Իսրաֆիլ բեկ աշխատում է ապացուցանել մի երկար ճառի մէջ, որ հայ-թուրքական ընդհարումների պատճառը հանդիսանում է «Դաշնակցութիւն» կոչված հայ յեղափոխական կազմակերպութիւնը, որից տանջվում են երկու ազգերի խաղաղ տարրերը: Իրանք հայերը, ճառախօսի պնդմամբ, սաստիկ դէմ են այդ կազմակերպութեան գործունէութեան: Իբրև ապացոյց թէ հայերը ունեն լաւ կազմակերպված և սպառազինված կուսակցութիւններ—Հաջիեվը գրպանից հանում և ներկայացնում է ինչ որ դօկումենտ—այդ կուսակցութիւններից մէկի կանոնադրութիւնը, յայտնելով, որ իր կեանքով երաշխաւորում է այդ դօկումենտի իսկութիւնը: Եթէ հայերը կամենում են անկեղծօրէն հաշտութեան և խաղաղութեան, պէտք է վերջ դնեն այդ Դաշնակցութեան գոյութեան:

Ձայներ հայերի կողմից: Խնդրում ենք կարդալ այդ դօկումենտը:

Պետերսօն կարդում է ռուսերէն: Դա մի կանոնադրութիւն է, որի մէջ մանրամասն ծրագրված է, թէ հայ խմբերը, խմբապետները, հրամանատարները, զինւորները, շտաբը, գլխաւոր շտաբը ինչ պարտաւորութիւններ և իրաւունքներ ունեն, ինչպէս պէտք է պահեն զէնքերը, ինչպէս պէտք է կռւեն թշնամու հետ, ինչպէս պէտք է պատժվեն յանցաւոր զինւորները և այլն: Երևում է, որ դա ոչ թէ Դաշնակցութեան կանոնադրութիւնն է, այլ որ և է մի տեղական ճիւղի կազմած հրահանգը, բայց արդեօք ճի՞շտ է թարգմանութիւնը, կա՞յ այդպիսի բնագիր. այդ մասին Հաջիեվը միայն իր կեանքով է երաշխաւորում, չը ներկայացնելով նոյն իսկ հայերէն բնագիրը:

Կ. Խատիսեան: Ո՞վ է ստորագրել: Մեքենայի վրա ամեն բան կարելի է տպել:

Հաջիեվ: Ես երաշխաւորում եմ իսկութիւնը ես այնքան միամիտ մարդ չեմ, որ կեղծ դօկումենտ ներկայացնեմ, այլապէս ես ինքնասպանութիւն կը գործեմ, եթէ այդ դօկումենտը կեղծ դուրս գայ:

Մալամա: Կան գաղտնի կազմակերպութիւններ. դա գաղտնիք չէ. հաշտութեան առաջին պայմանն այն է, որ այդ կազմակերպութիւնները դադարեն գոյութիւն ունենալուց: Այլ ևս հող չը կայ նրանց համար:

Ա. Խատիսեան, խօսում է երկար և զգացված շեշտերով. գծագրում է «Դաշնակցական» կազմակերպութեան դերը և նշանակութիւնը և լուսաբանում է իսկական լոյսով այդ կազմակերպութեան բուն նպատակը և բնաւորութիւնը, որ շատերը աշխատել են այլ գոյներով ներկայացնել:—Մենք հայերս, այսպէս սկսեց նա, լցված ենք բուռն ցանկութեամբ խօսել ցաւալի դէպքերի պատճառների մասին որքան կարելի է սակաւ, բայց քանի որ պ. Հաջիեվը սկսեց խօսել «Դաշնակցութեան» գործունէութեան մասին, մենք ստիպված ենք պատասխանել յանձին նրա՝ մուսուլմանութեան և բացատրել, թէ ինչ բան է այդ կազմակերպութիւնը և ինչ նպատակներ ունի նա: Դաշնակցութեան մեղադրում են թշնամութեան եթէ ոչ ստեղծման, գոնէ հայերի և թուրքերի մէջ սուր յարաբերութիւններ հաստատելու մէջ. բայց դա մի լեգենդա է, որ ստեղծվել է գործի լիակատար անծանօթութեան պատճառով: Պէտք է շօշափել Դաշնակցութեան պատմութիւնը որքան այդ կազմակերպութեան գործողութիւնները կապ ունեն հայ-թուրքական ընդհարումների հետ: Առհասարակ, այս կամ այն կուսակցութեան ոգին հասկանալու համար, պէտք է հասկանալ այն միջավայրը, որի մէջ ծագել է այդ կազմակերպութիւնը: Միայն ռէալական պահանջը կարող է կեանքի կոչել այս և այն կուսակցութիւնը: Դաշնակցութիւնը ստեղծվեց 15 տարի առաջ. նա արգասիք է որոշ հասարակական տրամադրութեան, որը, իր հերթին, արձագանք էր այն մեծ ազատագրական շարժման, որ ստիպեց մեծահոգի ռուս ժողովրդին գնալ Արևելք և օգնել իր տանջվող եղբայրներին: Նոյն մեծ իդէան—օգնել իր եղբայրներին Փոքր-Ասիայում, որոնք հեծում էին թուրքական անտանելի լծի տակ, ստիպեց մի խումբ մարդկանց ստեղծել առանձին կազմակերպութիւն: Այստեղ ես ձեր առաջ, պարոն իշխանաւորներ և ռուս զօրքի ներկայացուցիչների առաջ, որոնց աչքում աշխատում էին ցոյց տալ Դաշնակցութիւնը յեղաշրջված ձևով, ասում եմ, և թող իմանան ամենքը, որ Դաշնակցութեան իդէան ծագեց այն մեծ ազատագրական շարժման բոպէին, որով համակվեց ռուս ժողովուրդը: Տասը տարի այդ կուսակցութիւնը գործում էր, ուղարկում էր խմբեր և զէնք Թիւրքիա, կռւում էր թիւրքական ռէժիմի դէմ, որից տառապում էին միաժամանակ թէ հայերը և թէ ձեր եղբայրները, պարոնայք մուսուլման պատգամաւորներ: Մի՞ թէ հէնց այն պատճառով, որ դուք մուսուլմաններ էք, դուք պէտք է գովէք և պաշտպանէք թիւրքական ռէժիմը: Ո՛չ, դուք մուսուլման ինտելլիգենտներդ, պճնված ուսման նշաններով, պէտք է մտածէք և գործէք ճիշտ այնպէս, ինչպէս գործում և մտածում էր «Դաշնակցութեան» կուսակցութիւնը, որ գնում էր Թիւրքիա ոչ թէ կոտորելու թուրքերին, այլ ազատելու ժողովուրդը—թէ մուսուլման և թէ հայ ժողովուրդը, անտանելի բռնութիւնից: Ահա Դաշնակցութեան իդէան և միտքը: Ռուսաց իշխանութիւնը մոլորեցնվում էր Դաշնակցութեան նպատակների վերաբերմամբ. սա, իսկապէս, նոյն նպատակներին էր հետամուտ, որին հետամուտ էր և իշխանութիւնը: Իշխանութիւնը Կովկասում, մինչև կոմս Վօրօնցով Դաշկովի գալը, ամեն կերպ հալածում էր Դաշնակցութեանը, բայց այդպէս կարող էին գործել միայն ռուսական գործի դաւաճանները: Ասում են որ Դաշնակցութիւնը արիւն է թափում: Այո, բայց նա թափում էր այդ արիւնը յանուն մեծ գաղափարի, ինչպէս թափում էին և ռուս մարդիկ: Այստեղ, հէնց այս դահլիճում, մի քանի տարի առաջ ռուսական իշխանութեան բարձր ներկայացուցիչը Կովկասում արտասանեց այս ճակատագրական խօսքը. «հայ սեպարատիզմ». բայց այդ խօսքը արտասանողի անունը արդէն դատապարտութեան է ենթարկվել: Պ. Հաջիեվը իր ճառում ասաց, որ կազմակերպութեան անդամները ման են գալիս փափախներով, կատարում են սպանութիւններ և այլն: Այո, նրանք ման են գալիս փափախներով: Նրանց տեսել են և Մալաման, և պ. Ռաուշը և ուրիշները: Բայց ինչի համար էին նրանք ման գալիս: Նրանք ման էին գալիս ոչ թէ յարձակվելու, այլ պաշտպանելու: Դաշնակցութիւնը ցաւալի դէպքերի պատճառը չէր Կովկասում, բայց երբ այդ դէպքերը պայթեցին, ինչպէս կարելի էր արգելել նրան դուրս չը գալ ժողովրդի պաշտպանութեան համար: Եւ նա դուրս եկաւ իր գեղեցիկ (այո, ես այդ ասում եմ) Մաուզերի հրացաններով: Անցան ամիսներ—և հայ ժողովուրդը, հարկադրված՝ վերցրեց իր վրա զօրքի դերը, գեղեցիկ զօրքի և կռւեց ռուս զօրքերի կողքին: Մի ժամանակ այստեղ տարածեցին զզուելի զրպարտութիւն, թէ Դաշնակցութիւնը կամենում է յարձակվել և սպանել բոլոր ռուս օֆիցերներին—և գտնվեցին մարդիկ, որոնք հաւատացին այդ զրպարտութեան: Այո, երկգլխեան արծիւը թաթախվեց արիւնով, բայց թաթախվեց իշխանութեան անարժան ներկայացուցիչների յանցանքով, որոնք խայտառակում են ռուս անունը:

Իր աղօթքների մէջ հասարակ հայ ժողովուրդը դիմում է Աստծուն, հայցելով «Թող ռուս թագաւորի սուրը հատու լինի». իսկ այդպիսի ժողովուրդը չի գնայ ռուսական տիրապետութեան և ռուս ժողովրդի դէմ: Դաշնակցութիւնը, պ. Հաջիեվ, իր թուրը կը դնի երախակալի մէջ, բայց կը դնի միայն այն ժամանակ, երբ նա այլ ևս պէտք չի ունենայ պաշտպանել ժողովուրդը: Ո՞վ է ձեզ ասել, որ հայերը դժգոհ են Դաշնակցութիւնից: Յիշեցէք, որ Դաշնակցութիւնը չար մտքեր չունի ոչ հայերի, ոչ թուրքերի դէմ, նա ամենևին չէ կամենում վնասել թուրքերին: Մեզ վրա բարդում են բազմաթիւ զրպարտութիւններ, բայց մի հաւատաք դրանց: Մենք չենք ուզում ոչ աւտօնօմիա, ոչ տէրրիտօրիայի բաժանումն. մենք չենք ուզում բաժանվել թուրքերից, մենք կամենում ենք լայն տեղական ինքնավարութիւն ֆեդերատիվ հիմունքներով, ձեզ, թուրքերիդ հետ միասին. մեր ցանկութիւնն է—անբաժան Կովկասը, անբաժան և ազատ Ռուսաստանի մէջ»:

Այս ճառի տպաւորութիւնը այնքան զօրեղ էր, որ մուսուլման պատգամաւորները հարկ համարեցին վկայել դրա մասին իրանց ճառերի մէջ:

Բժ. Կարաբէկով գտնում է, որ կազմակերպութեան նպատակները կարող են վեհ լինել, երբ նա հետամուտ է իրագործել նրանց. բայց կազմակերպութիւնը կարող է շեղվել իսկական շաւղից: Եթէ մուսուլմաններին ծանօթացրած լինէին Դաշնակցութեան իսկական նպատակների հետ, գուցէ վերաբերմունքը դէպի նրան այլ լինէր: Բայց վերջին տարիները մուսուլմանները տեսնում էին, որ Դաշնակցութիւնը հետամուտ է նեղ-ազգայնական նպատակների, եթէ ոչ հակամարդկային: Կուսակցութիւնը չը կարողացաւ ներշնչել մուսուլմաններին, թէ նա կռւում է ամենքի համար, մուսուլմանները, այսինքն հասարակ ժողովուրդը կարծում է, որ կուսակցութեան նպատակն է—ջնջել մուսուլմանութիւնը. նրանք մտածում են, որ Դաշնակցութիւնը կամենում է օգտվե՛լ Ռուսաստանի դժուար կացութեամբ, որ ազատվէ ռուսական տիրապետութիւնից: Որքան այդ ճիշտ է—դա ուրիշ հարց է, բայց մուսուլմանութիւնը այդպէս էր մտածում և այդ հողի վրա ծագեց թշնամութիւնը: Մի անգամ որ հայերը ունեն կազմակերպութիւն, մտածում էին մուսուլմանները, ինչո՞ւ մենք էլ չունենանք: Բայց մենք իսկապէս չենք ձգտում այդ տեսակ կազմակերպութեան:

Մենք այստեղ չենք ցանկանում ոչ թուրքական, ոչ հայկական թագաւորութիւն ունենալ, այլ միայն ռուսական: Թող հայ կազմակերպութիւնները գնան Թիւրքիա, մենք ինքներս կօգնենք նրանց այդ բանի մէջ, բայց թող մեզ հանգիստ թողնեն:

Հաջիեվ ջերմ խնդիրքով, որոնք ընդունվեցին հայ պատգամաւորների կողմից բուռն ծափահարութիւններով, առաջարկեց մոռանալ հին հաշիւները և ձեռք մեկնել մէկ մէկու ի նշան կատարեալ հաշտութեան:

Աղայեվ ընդունելով որ պ. Խատիսեանը բոլորովին կանոնաւոր կերպով ուրուագծեց Դաշնակցութեան կուսակցութեան ծագման պատմութիւնը և նրա պատկերը և թէ այդ կուսակցութիւնը գործեց այնպէս, ինչպէս պէտք էր գործել, ճառախօսը ընդգծեց այն օրգանական պատճառները, որոնք նրա կարծիքով՝ ծնեցրին ներկայ թշնամութիւնը: Այդ օրգանական պատճառը քրիստոնէութեան և մուսուլմանութեան անտիթեզն (հակադրութիւնն) է: Խատիսօվը երկար կանգ առաւ քրիստոնեաների, մասնաւորապէս Թիւրքիայի հայերի իրաւազուրկ դրութեան վրա, բայց ոչ մի խօսք չասեց մուսուլմանների իրաւազուրկ դրութեան մասին Ռուսաստանում: Գոլիցինի ժամանակ մուսուլմանները Կովկասում ռայա էին, տեղական իշխանութիւնները խրախուսում էին քրիստոնեաներին ի վնաս մուսուլմանների: Գոլիցինից առաջ Կովկասի տէրը իրողապէս հայերն էին, տիրապետելով, ամեն տեղ, նրանք արտայայտում էին նեղ ազգայնական ձգտումներ: Ես չեմ մեղադրում այդ բանի մէջ հայերին՝ գուցէ մուսուլման պետութեան մէջ մուսուլմանները նոյնպէս կը վարվէին հայերի հետ, բայց ես մեղադրում եմ այդ բանի մէջ իշխանութեանը, մեղադրում եմ նրան այն բանի մէջ, որ նա միակերպ չէր վերաբերվում այս և այն ժողովրդին, որի շնորհիւ ազգաբնակութեան մի մասը շուտով առաջացրեց, իսկ միւսը յետ մնաց: Իշխանութեան այդ մեղքերի համար այժմ մենք ենք հատուցանում: Բայց անցեալը պէտք է մոռանալ: Դիմում եմ ձեզ, պարոնայք հայ պատգամաւորներ, եթէ դուք կամենում էք, որ այսօրվանից չը լինեն «հայեր» և «թուրքեր», այլ լինեն միայն «կովկասցիներ», ուրեմն ի նկատի ունեցէք մուսուլմանների յետամնացութիւնը. դուք արդէն ձեռք բերիք շատ բան, իսկ մենք դեռ ոչինչ: Մենք այսուհետև պէտք է ձգտենք ոչ թէ այն բանին, որ զօրքերը ռմբակոծեն մեր և ձեր գիւղերը, այլ այն բանին, որ մուսուլման ժողովուրդը հաւասար իրաւունքներ ստանայ ուրիշների հետ (բուռն ծափահարութիւններ հայերի կողմից):

Կ. Խատիսեան ցոյց տուեց այն կարծիքի սխալ լինելը, թէ իբր հայերը չեն ուզում թուրքերի կուլտուրական բարգաւաճումը: Հայերը, իբրև դրացիներ, չեն կարող չը ցանկալ թուրքերի բարգաւաճումը, որովհետև եթէ հարևանս լաւ է ապրում, ես էլ լաւ եմ ապրում, բայց դժբախտաբար, ինքն մուսուլման մասսան անշարժութիւն է ցոյց տալիս:

Ջիւանշիրով Ադել-խան տալով արժանաւոր հարկը Ա. Խատիսեանի ճառին և Դաշնակցութեան կուսակցութեան վեհ նպատակներին, գտնում է, որ այդ կուսակցութիւնը պէտք է դադարեցնէ իր գործունէութիւնը մուսուլմանների դէմ, այլապէս մուսուլմանների մէջ ևս կերևան այդպիսի կազմակերպութիւններ և ամբողջ Կովկասը արեամբ կը հեղեղվի:

Ս. Թաղեանոսեան արտայայտելով իր և իր ընկերների հաճոյքը մուսուլման պատգամաւորների ճառերի առթիւ, գտնում է, որ կազմակերպութիւնները ծագում են և մեռնում են ոչ մասնաւոր անձանց կամքով. դրա համար հարկաւոր է հող և մենք կօրհնենք այն բոպէն, երբ այլ ևս հող չի լինի այդ տեսակ կազմակերպութիւնների համար:

Նախմալիեվ Մ. բէկ ի մի գումարելով բոլոր ասածները Դաշնակցութեան մասին, որի ծագման պատմութեան հետ նա ինքը շատ լաւ ծանօթ է, գտնում է, որ հայ եկեղեցու կալուածների գրաւումից յետոյ, այդ կուսակցութիւնը իր գործունէութիւնը տեղափոխեց Կովկաս: Նրա գործունէութեան մուսուլմանները վերաբերվեցին կոռրեկտօրէն, գտնելով եկեղեցական կալուածների յափշտակութիւնը իբրև ակտ բռնութեան: Բայց երբ ծագեցին հայ-թուրքական յարաբերութիւնները, այդ կուսակցութիւնը ահագին դեր կատարեց: Նրա գործունէութիւնը անբարոյականացրեց թուրքական մասսան. եթէ կազմակերպութիւնը կարող է կռիւ մղել կառավարութեան հետ, ինչո՞ւ մենք էլ չենք կարող համանման մի բան ստեղծել և ահա իբրև հակակշիռ Դաշնակցութեան երևացին մեր հրոսակախմբերը (ցաւօք սրտի ասեմ այս): Մենք չենք կարող համոզել մեր մասսան այդ հրոսակախմբերի անօգտաւէտութեան մէջ: Որպէս զի նրանք դադարեն գոյութիւն ունենալուց, ես խորապէս խնդրում եմ ձեզ դադարեցնէք Դաշնակցութեան գործունէութիւնը:

Ս. Խատիսեան: Մուսուլման պատգամաւորները ինձ մեծ պատիւ արին, ցոյց տալով վստահութիւն դէպի այն զգացմունքների անկեղծութիւնը, որոնցով ես կոչ արի նրանց իմ ընկերների կողմից մոռանալ անցեալը: Այդ անցեալը մոռանալու համար երկու պայման կայ. թող նրանք անկեղծօրէն հաւատան, որ մենք աջակցելու ենք նրանց ձգտումների մէջ դէպի լուսաւորութիւն: Մինչև այսօր անվստահութեան պատնէշ էր կանգնած մեր մէջ, որ թոյլ չէր տալիս մեզ լսել մէկ-մէկու ձայն, բայց այսօրվանից հարկաւոր է միաբան աշխատակցութիւն և թող այսօրվայ ժողովը դրա սկիզբը դնէ. երկրորդ՝ թող մեզ հնարաւորութիւն տան ազատօրէն հասկանալ միմեանց: Երբ հայ եկեղեցական կալուածքների գրաւման ժամանակ մի գաւառապետ դիմեց մուսուլմաններին և խնդրեց նրան օգնել հայերի դէմ, մուսուլմանները հպարտութեամբ մերժեցին այդ առաջարկը. թող այդպիսի վերաբերմունք լայն հոսանքով տարածվէ այժմ և թափանցէ ժողովրդական մասսաների մէջ: Ճշմարտութիւնը, միայն ճշմարտութիւնը պէտք է փայլէ մեր մէջ և նրա ազնիւ ճառագայթներից պէտք է հալուէ այն սառցային ժայռը, որ մինչև այսօր կանգնած էր մեր մէջ:

Դոկտ. Կարաբէգօվ:— Ես նորից հիացմամբ եմ լսում իմ կօլլեգի ճառը: Մենք առաջին անգամ ենք լսում այդպիսի ճառեր, այդպիսի կոչեր միահամուռ կուլտուրական աշխատութեան: Մինչև այսօր հայերն արհամարհանքով էին վերաբերում դէպի մեզ, մինչ նրանք իբրև կուլտուրական տարր պէտք է աշխատէին գրաւել մեզ:

Ս. Յարութիւնեան:—Իր հոգեկան ուրախութիւնն է յայտնում այն խաղաղ տրամադրութեան համար, որ թագաւորում է ներկայ ժողովում և գտնում է, որ հայ և մուսուլման ինտելլիգենցիան իր ժամանակին ամեն բան արաւ ցաւալի ընդհարումների առաջն առնելու, բայց պրօվօկացիան աւելի զօրեղ հանդիսացաւ: Հայերը միշտ ուրախանում էին մուսուլմանների աջողութեամբ և մերժվեց նրանց միջնորդութիւնը բանալ Բագւում մուսուլմանական բարեգործական ընկերութիւն. այդ մերժումը խորին վրդովմունք առաջացրեց հայերի մէջ: Այն իրաւազրկութիւնը, որի վրա ակնարկում է պ. Աղայեվը—ընդհանուր էր, բայց հոկտ. 17-ի մանիֆեստից յետոյ մեզ բոլորիս համար բացվում է ճանապարհ դէպի ազատութիւնը: Դաշնակցութեան դերը եղել է բացառապէս ինքնապաշտպանական. այդ կուսակցութիւնը երբեք ձեռք չէ բարձրացրել ժողովրդական իրաւունքների վրա, ինչպէս կարելի է տեսնել նրա թռուցիկներից:

Յաջորդաբար խօսում են և մի քանի ճառախօսներ:

Նախ. Մալաման յայտնում է, որ այսօրվայ ժողովի գեղեցիկ տպաւորութիւնը չը ջնջելու համար փակում է նիստը և խնդրում է գումարվել վաղը, փետրվ. 24-ին, ժամի 2-ին:

Սակայն այդ հարցի մասին վերջնական որոշումը խմբագրելու համար առաջարկում է ընտրել մի մասնաժողով, որը կը մշակէ որոշումը և կը ներկայացնէ յաջորդ նիստին: Ընտրվում են 14 հոգի, 7-ը հայերի, 7-ը թուրքերի կողմից. այն է՝ 1) Ս. Խատիսեան, 2) Ս. Թաղիանոսեան, 3) Ս. Յարութիւնեան

4) բժ. Ստեփանեան, 5) Հ. Առաքելեան, 6) Գ. Տէր-Պետրոսեան, 7) Ա. Ղուկասեան, 8) Թոփչիբաշէվ, 8) Զիաթխանով, 10) դոկտ. Կարաբէգով, 11) Շահթախտինսկի, 12) Շախմալիէվ, 13) Խասամմէդով և 14) Աղայէվ:

Ժամը 6-ին բոլոր պատգամաւորները հեռանում են պալատից գեղեցիկ տպաւորութեան ներքոյ:

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XXXII

Ես չէի սխալվում, երբ անցեալ անգամ ասում էի, թէ ներկայ հայ-թուրքական համագումարը ահագին նշանակութիւն պէտք է ունենայ ընդհանուր-հասարակական և սօցիալական տեսակէտից:

Փետրվարի 23-ի նիստը եկաւ դրա մի փառաւոր ապացոյցը տալ:

Այդ օրվանից այդ նիստը պատմական դարձաւ:

Այո, պատմական:

Փետրվարի 23-ին, հայ ժողովուրդը, ի դէմս իր պատգամաւորների, ի դէմս այն ճառախօսների, որոնց յանձնված էր խօսել պատգամաւորների կողմից, Փոխարքայի պալատում, Փոխարքայի, զինւորական և քաղաքացիական բարձրաստիճան պաշտօնեաների ներկայութեամբ, այն դահլիճում, ուր 3 տարի առաջ իշխան Գոլիցինը և իր բանակը ամեն տեսակ ջանքեր էին դնում՝ հայ ժողովուրդը ոչնչացնելու, ջնջելու նրա մարդկային և ազգային իրաւունքները ոտնահարելու համար, այդ իսկ պալատում հայ ժողովուրդը արտասանեց իր բողոքը, լսել տուեց իր ձայնը. բարձրաձայն աղաղակեց, թէ ով է նա, ինչ է կամեցել, ինչ է կամենում, ինչ պէտք է այսուհետև անէ, ինչպէս է նայում Ռուսաստանի, Թիւրքիայի, Թուրք և օսմանեան ժողովուրդների վրա, ինչ քաղաքական, հասարակական և սօցիալական ձգտումներ ունի: Նա, հայ ժողովուրդը, ապացուցեց, որ ծարաւի լինելով խաղաղ, կուլտուրական գործունէութեան, ամենևին պէտք չունի՝ յեղափոխական ծայրահեղ միջոցների դիմելու, եթէ միայն թոյլ տան նրան ապրել իբրև մարդ, մարդկային իրաւունքներով, եթէ միայն թոյլ տան իրան զարգանալ տնտեսապէս, հոգևոր-բարոյական-մտաւոր անկախութիւն ունենալ. Նա ապացուցեց, որ Թիւրքիայում հայ յեղափոխականները կռւում են ոչ թէ օսմանեան ժողովրդին վնասելու, ոչ թէ «հայկական պետութիւն» ստեղծելու, այլ միայն Սուլթան Աբդուլ-Համիդի բռնապետական ռէժիմի դէմ, ռէժիմ, որ հաւասարապէս կործանիչ է և հայերի և մուսուլմանների համար, ռէժիմ, որ արդէն չարաչար կերպով աւերել, կործանել է ամբողջ Թիւրքիան:

Նա, հայ ժողովուրդը. ապացուցեց, որ իր աջակցութիւնը, բարոյական և նիւթական, շնորհել է յեղափոխական կազմակերպութիւններին միայն և եթէ նրա համար, որ նրանք հանդիսացել են արտայայտիչ բողոքի իշխան Գոլիցինի անօրէնութեան դէմ և դիմադրել են նրա ձգտումներին՝ ոչնչացնել հայ ազգը բարոյապէս և հոգևորապէս: Նա ցոյց տուեց, որ յեղափոխական կազմակերպութիւնները իրանց գործունէութեան համար այլ ևս ոչ մի հող չէին կարող գտնել և ստիպված պէտք է լինէին հեռանալ ասպարէզից, Կովկասում, վերադառնալ այն սկզբնական նպատակին, որի համար ստեղծված են, այն է Թիւրքիայի հայ ժողովրդի փրկութեան համար աշխատելու, այն օրից, երբ շնորհիւ Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովի վերականգնվեցին հայերի բռնաբարված իրաւունքները, եթէ միայն Գոլիցինեան ռէժիմի խոր արմատ ձգած պրօվօկացիան չը ստեղծէր մի նոր վտանգ, մի նոր դժոխք—երկու ազգեր, հայերին և Թուրքերին իրար դէմ սրելու, իրար կոտորելու: Այդտեղ յեղափոխական ոյժերը ստիպվեցին շարունակել իրանց գործունէութիւնը՝ հայերի ինքնապաշտպանութեան համար:

Այո, պատմական էր փետրվարի 23-ի նիստը:

Որովհետև այդ օր, առաջին անգամ, Թուրք ժողովրդի ներկայացուցիչները, ի դէմս իր ինտելիգենտ անդամների, այն պալատում, ուր 3 տարի առաջ ջատագովում էին Գոլիցինեան խայտառակ և հրէշաւոր ռէժիմը, այնքան քաղաքացիական քաջութիւն ունեցան, որ խոստովանեցին, թէ, արդարև, երկու ազգերի մէջ ստեղծված դժոխային վիճակի գըլխաւոր պատճառը Գոլիցինեան ռէժիմի ներկայացուցիչներն են, տեղական իշխանութիւնների յանցաւոր անգործութիւնը, սադրանքը:

Եւ դա արդէն մի ահագին քայլ է դէպի համերաշխութիւն հայերի և Թուրքերի մէջ:

Երկրորդ ահագին քայլը դէպի համերաշխութիւն հայերի և Թուրքերի մէջ—Թուրք ինտելլիգենտ ներկայացուցիչների խոստովանութիւնն է, թէ, արդարև, Աբդուլ-Համիդեան ռէժիմի դէմ կռւելը գովելի և սիրալի գործ է:

Երրորդ ահագին քայլը դէպի համերաշխութիւն հայերի և Թուրքերի մէջ այն յանդիմանութիւնն է Թուրք ներկայացուցիչների կողմից հայերին և հայերի խոստովանութիւնը, որ արդարև, հայերը քիչ են մտածել հաղորդակից անելու Թուրքերին իրանց կուլտուրական բոլոր ձեռնարկութիւններին և չեն նպաստել նրանց լուսաւորութեան, զարգացման գործին:

Վերջապէս չորրորդ քայլը դէպի համերաշխութիւն հայերի և Թուրքերի մէջ, այն՝ որ հայերը հանդիսաւորապէս խոստացան Թուրքերին՝ իրանց բոլոր ոյժերով աջակցել, պաշտպանել այն ձեռնարկութիւնները, միջնորդութիւնները, որոնք կարվեն մուսուլմանների կողմից ստանալու համար համահաւասար քաղաքացիական իրաւունքներ, տարածելու ընդհանուր ուսումն Թուրքերի մէջ, մի խօսքով մտնելու խաղաղ կուլտուրական զարգացման շաւղի մէջ:

Եւ չենք կարող շնորհակալութիւն չարտայայտել կոմս Վօրոնցով-Դաշկովին, որ հնարաւորութիւն տուեց հայ և Թուրք ժողովուրդների ներկայացուցիչներին այս բոլորը արտայայտել իր պալատում այնքան հանդիսաւոր և անկեղծ կերպով:

Այո, պատմական էր փետրվարի 23-ի նիստը:

Շահրիար

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՆՁԱԿՈՒՄ

I

Ինչպէս յայտնի է հայ-թուրքական ընդհարումներին վերջ դնելու համար Գանձակում անցեալ դեկտեմբերին, ընդհարումների ամենաեռուն ժամանակը, տեղական զօրքի սպայակոյտի անդամները ընտրեցին իրանցից մի յանձնաժողով, որը իր ընտրողներից լիազօրութիւն ստացաւ հաշտեցնել Թուրքերին հայերի հետ: Յանձնաժողովը դիմեց հայ և Թուրք հասարակութեան, առաջարկելով ընտրել իւրաքանչիւր կողմից տասներկու պատգամաւոր հաշտութեան բանակցութիւնների համար. Նրանց առաջարկութիւնը սիրով ընդունվեց, մանաւանդ հայերի կողմից, որոնք երբէք մտադիր չեն եղել կռւել իրանց հարևանների հետ ու դժոխք դարձնել մի չէն քաղաք, որը գլխաւորապէս նոյն հայերի ջանքերով էր ոտի կանգնել ու հասել այն համեստ բարօրութեան, որը գոյութիւն ունէր Գանձակում մինչև չարաբաստիկ նոյեմբերի 18-ը: Պատգամաւորների ընտրութիւնները թէ հայերի և թէ Թուրքերի մէջ կատարվեցին օֆիցէրների ներկայութեամբ, գաղտնի քուէարկութեամբ: Օֆիցէրների և նրանց ղեկավար գնդապետ Դ. Ֆ. Իսաեվիչի ցոյց տուած եռանդը ընտրութիւնների ժամանակ ու բանակցութիւններից առաջ տեղի ունեցած նախապատրաստական ժողովներում հիմք էին տալիս յուսալ, որ նրանք անկեղծ ու անպայման լուրջ ցանկութիւն ունեն հաշտութիւն կայացնել երկու հարևան ազգութիւնների մէջ ու դրա համար կանգ չեն առնի այն եական միջոցների առաջ, որոնց շնորհիւ միայն կարող է խաղաղութիւնը յարատև լինել Գանձակում ու հաշտութիւնը Թուրք ու հայ ազգաբնակութեան մէջ միայուն, ամուր ու անխախտ: Բանակցութիւնները հայ ու Թուրք պատգամաւորների մէջ, օֆիցերական խաղաղարար յանձնաժողովի ներկայութեամբ ու միջնորդութեամբ, սկսվեցին դեկտեմբերի 6-ին ու տևեցին մինչև 24-ը: Գրգռված կրքերը այնչափ անհանդիստ էին դեռ, որ նոյն իսկ նիստի դահլիճում կանգնում էին սուինաւոր զինւորներ. մենք առանց սուինաւոր թիկնապահների չէինք կարողանում Թուրքերի կողմն անցնել, իսկ Թուրքերը՝ մեր: Այդպիսի այլանդակ պայմաններում շարունակվեցին բանակցութիւնները 18 օր: Մենք ամեն կերպ աշխատեցինք համոզել միջնորդ օֆիցերներին ու Թուրք պատգամաւորներին առանց քաշվելու դիմել եական միջոցների, ասպարէզ հանել հաշտութեան իսկական գարանտիաներ, բայց ի զուր. հէնց առաջին երկու-երեք նիստից յետոյ պարզվեց, որ բանակցութիւնները լուրջ հետևանքների չեն հասնի, քանի որ թէ պ.պ. օֆիցերները, և թէ ևս առաւել Թուրքերը ամեն կերպ խուսափում էին լուրջ միջոցներից: Մեր անկեղծութիւնը պարզ էր ու ակներև. այդ խոստովանեցին շատերը օֆիցերներից. մենք ձգտում էինք ու ձգտում ենք իսկական հաշտութեան, այլ ոչ թէ նոր դիրքեր ու յարմարութիւններ ձեռք բերելու նորանոր վայրագութիւններ (à la նոյեմբերի 18) գործելու. իսկ մեզ հետ բանակցող մեր հարևան ազգի ներկայացուցիչների մէջ ցանկալի անկեղծութիւն չէինք նկատում: Մենք հայ հասարակութեան կողմից առաջարկեցինք հաշտութիւնն ու խաղաղութիւնը յարատև դարձնելու այսպիսի միջոցներ՝ քննութիւն նոյեմբերի 18-ի դէպքերի, այն անօրինակ, նոյն իսկ Անդրկովկասի համար, ամարդի վայրագ յարձակման, որին ենթարկվեցին հայերը Գանձակի բազարում, ենթարկվեցին իրանց խաղաղ աշխատանքի ժամանակ, առանց մի ամենափոքր գոնէ առիթ տալու Թուրքերին. բ) պատիժ յանցաւորների, գլխաւորապէս Թուրք ամբոխի ղեկավարների համար, որոնց անունները Գանձակի օրօրոցի մանուկներին անգամ յայտնի են. գ) զէնքերի հաւաքում ու դ) քաղաքի բաժանումն երկու մասի՝ հայկական ու Թուրքական, իր առանձին քաղաքային ու հասարակական հիմնարկութիւններով: Այդ էական միջոցներից ոչ մէկը չընդունվեց. օֆիցերները թէև խոստովանվեցին, որ մեր պահանջները իրաւացի են ու խելացի, բայց, քանի որ Թուրքերը ինքնակամ չեն ընդունում, անիրագործելի են. օֆիցերական յանձնաժողովը մի լիազօր տրիբունալ չէ, օժտուած չէ իշխանութեամբ այնչափ, որ կարողանայ ստիպել Թուրքերին ընդունել հայերի արդարացի պահանջները. Նա, խաղաղարար յանձնաժողովը մի միջնորդ մարմին է, նրա դերը լուրջ միջնորդութիւնից հեռու չէ գնում ու չէ կարող գնալ: Թուրքերը մեր պահանջները անպայման մերժեցին. Նոյեմբերի 18-ի գազանութիւնները ու հայկական միլլիօնների յափշտակումը նրանք վերագրեցին ինչ որ խուլիգանների, որոնց գործողութիւնները Թուրք հասարակութիւնն էլ դատապարտում է ու այդպիսով պատասխանատու լինել նրանց համար չէ կարող: Երբ հարցնում էինք՝ «ովքեր էին խուլիգանները, ինչ ազգութեան էին պատկանում «համ Ալի» բղաւող խուլիգանները.» նրանք պատասխանում էին՝ «սատանան ինքն անգամ չէ կարող իմանալ, թէ ովքեր էին, ինչ ազգութեան էին պատկանում նրանք. ամեն տեսակ տականքներ (всякій сбродъ) կային նրանց մէջ. խուլիգաններ էին էլի, ա՛ քըլի, խուլիգաններ. չէ որ հիմա ամեն տեղ նրանք ազատ գործում են. այստեղ էլ օգտուեցին ազատութեամբ էլի. մենք նրանց արածների համար բնաւ պատասխանատու չենք. մենք անպայման անմեղ ենք, անպայման...» Մի քանի ամիս առաջ, մինչև նոյեմբերի 18-ը, մեր հարևանները ամեն չարիք, հայ-Թուրքական յարաբերութիւնների մէջ պատահող, վերագրում էին հռչակաւոր «չէյթաններին». Նոյեմբերի 18-ից յետոյ ամեն բան, մեր աչքի առաջ կատարված իրանց սանձարձակ ամբոխի սոսկալի գազանութիւններն ամբողջովին վերագրում են միշտ «ինչ որ խուլիգանների», ակնարկով անգամ չասելով թէ ինչ ազգութեան են նրանք պատկանում, «խուլիգան» տերմինը նրանց համար մի անգնահատելի գիւտ է...

Մեր չորս էական պահանջներից երեքը երբ հանդիպեցին բուռն ընդդիմադրութեան Թուրքերի ու անտարբերութեան խաղաղարար օֆիցերների կողմից որոնք մեր համոզեցուցիչ պատճառաբանութեան հետ համաձայնվելով հանդերձ պատասխանեցին, որ ոչինչ անել այդ կէտերն իրականութիւն դարձնելու համար չեն կարող, մենք վճռաբար, առանց ամենափոքր զիջում անելու, սկսեցինք պնդել մեր պահանջների 4-րդ կէտի իրագործման վրա, այն է՝ Գանձակի բաժանման երկու քաղաքամասի, հայկական ու Թուրքական: Թուրքերը ոչ պակաս վճռաբար սկսեցին առարկել նաև մեր այդ պահանջի դէմ. Ինչ էին առարկում նրանք ու ինչից դրդված, դրա մասին հետևեալ անգամ:

Ստ. Տէր-Աւետիքեան

ՀԱՅԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՈՒ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՀԱՐՑԸ

I

Միակ խնդիրը, որն այժմ զբաղեցնում է Կովկասի ամբողջ հայութիւնը, մամուլը—դա հայ-Թուրքական յարաբերութիւնների բարւոքման հարցն է: Դրա մասին են խօսում, վիճում ամենքը. դա է զբաղեցնում մեր լրագրութեան շատ ու շատ էջերը և սակայն ինչպէս մի գորդեան հանգոյց շարունակում է անլուծելի մնալ...

Շատերի, գուցէ և մեծամասնութեան, կարծիքն այն է, որ անհրաժեշտ է վերջապէս հասկացնել Թուրքին նրա անխորհուրդ ու վայրենի արարքի ամբողջ վնասակարութիւնը, դրա ներկայ ու ապագայ զարհուրելի հետևանքները հասկացնել նրան, որ հայի վրա յարձակվելով նա խաղում է կրակի հետ, որից աւելի շատ նրա ձեռքերն են այրվում, որ այդ ընդհարումները երկսայրի սրեր են, որոնք աւելի խոր, հէնց Թուրքի կողքն են մխրում: Դրանք ասում են, որ մենք իբրև աւելի «կուլտուրական ու խելօք» ժողովուրդ՝ պէտք է «կռանանք Թուրքի անգէտ, սանձված, երկչոտ ու վայրենի հոգու վրա և բարձրացնենք նրան դէպի լուսաւոր իդէալները» («Մշակ» № 30) և այդ նպատակին հասնելու համար առաջարկում են մի շարք, եթէ կարելի է այսպէս ասել, «կուլտուրական» միջոցներ: Դրանց մէջ առաջնակարգ տեղ են բռնում բերանացի ու գրաւոր պրօպագանդան Թուրքերի մէջ յօգուտ խաղաղութեան և նրանց մտաւոր բարոյական մակերևոյթի բարձրացումը:

Դրանք իդէալիստ մտածողներն են:

Դրանց դէմ կանգնած են կեանքի երևոյթների վրա աւելի գործնական աչքով նայողները: Սրանք ասում են.—«մի տարվան անթիւ փորձերը ցոյց տուին, որ Թուրքը կարող է բարի խրատը լսել ոչ թէ ականջով, այլ թիկունքով. եթէ ուզում էք, որ նա բարեկամանայ ձեզ հետ, պէտք է ցոյց տաք նրան ձեր ոյժը, պէտք է սուրը ակն ընդ ական, կամ գոնէ ամուր պաշտպանված լինէք. այն օրը, երբ Թուրքը կը համոզվի, որ հային չէ կարող վնասել, նա այդ օրը միայն կը հանգստանայ»:

Ո՞րն է սրանցից իրաւացին, որին պէտք է հետևել հայ-Թուրքական հաշտութեան դժուարին գործը աջողութեամբ գլուխ բերելու համար:

Կարծում ենք այդ խնդրի քննութեան դիմելուց առաջ անհրաժեշտ է սկզբունքով պարզել մի հարց, թէ ինչ տեսակ հաշտութիւն են ուզում հայերը ձեռք բերել Թուրքերից, արդեօք այն, որ Թուրքերն իրանց մտքից հանեն ամեն մի տեսակ նենգ ու թշնամական զգացմունքները դէպի հայերը և վճռեն անկեղծ բարեկամ լինել նրանց հետ, մի խօսքով—այլ ևս չուզենան թշնամական գործողութիւններ սկսել հայերի դէմ, թէ՞ ստեղծել իրերի մի այնպիսի դրութիւն, որ եթէ Թուրքերն ինչքան էլ ուզենան վնասել նրանց, բայց անզօր լինեն—չը կարողանան. կարճ ասած, մենք ինչի՞ ենք ձգտելու, որ Թուրքն այլ ևս մեզ չուզենա՞յ վնասել, թէ՞ չը կարողանայ:

Այդ մասին կարող ենք ասել, որ մինչև այժմ խաղաղ ճանապարհով մեր գործ դրած բոլոր միջոցները ուղղված են եղել դէպի դըրանցից առաջինը: Մենք խաղաղարար յանձնաժողովներ ենք ընտրել Թուրքին համոզելու համար, գրաւոր ու բերանացի կոչեր ենք ուղղել նրան հասկացնելու համար, մի խօսքով, մինչև այժմ մենք աշխատել ենք ազդելու նրա մտքի վրա: Մենք ամեն հնար գործ ենք դրել, որ Թուրքը գայ այն համոզման, որ լաւ գործեր չէ կատարում և այլ ևս չը պէտք է ուզենայ դրանց կրկնութիւնը: Մեր բոլոր ջանքն է եղել յետ տանել Թուրքի միտքն այն դրութեան, որի մէջ էր սրանից մի տարի առաջ, երբ նա այս թէ այն պատճառով համոզված էր, որ պէտք է հաշտ դրացի լինել հայի հետ և ապրել խաղաղ կեանքով, աշխատել ճակատի քրտինքով:

Այս մի տարվայ ընթացքում այդ ուղղութեամբ մեր գործ դրած բոլոր միջոցները սակայն ապարդիւն անցան: Մենք ոչինչ չը կարողացանք հասկացնել Թուրքին մեր լեզուով, մեր գրչով. և ահա այժմ, երբ վերջապէս հարկադրաբար պահանջ է զգվում ինչ էլ կուզէ լինի միջոցներ գտնել հայ-Թուրքական ընդհարումներին վերջ տալու համար, մենք տեսնում ենք, որ մարդիկ դարձեալ առաջարկում են նոյն մտաւոր-բարոյական.—Թուրքի միայն հոգու վրա ազդելու միջոցները, մոռանալով, որ Թուրքն ապրում ու գործում է աւելի ֆիզիքական, քան թէ հոգևոր կեանքով և որ, հետևապէս, անհրաժեշտ է նախ ազդել նըրա ֆիզիքականի վրա...

Սակայն ենթադրենք թէ Թուրքը լսեց մեր խրատն ու յորդորը և խոստացաւ այլ ևս ոչինչ թշնամութիւն չանել. դրանով կարո՞ղ ենք մենք հանգստանալ ու ապահով զգալ մեզ: Ենթադրենք, թէ նրա այդ խոստումն այժմ նոյն իսկ սրտանց լինի, սակայն դա ո՞րքան երաշխաւորութիւն է ապագայի համար: Չէ՞ որ դեռ մի տարի առաջ Թուրքն այնպէս խաղաղ էր, գուցէ նոյն իսկ խեղճ կամ բարի, իսկ այսքան կարճ միջոցում նա յանկարծ փոխվեց այդքան զարհուրելի կերպով. հիմա էլ եթէ նա բարոյապէս վերածնվի, չէ՞ կարող դարձեալ մետամորֆօզի ենթարկվել մի քանի ժամանակից յետոյ... Ո՞վ կարող է երաշխաւորել, որ Թուրքն այժմ հաշտվելով, այլ ևս երբէք չի ուզենալ վնասել հային: Իսկ եթէ հակառակ այդ բոլոր լաւատես ակնկալութիւնների, ձեր այժմեան կառուցած հաշտութեան վիթխարի կոթողը դարձեալ կը կործանվի Թուրքերի ձեռքով շատ կամ քիչ տարիներից յետոյ, այն ժամանակ ինչ պէտք է անենք, դարձեալ ստիպված չը պիտի՞ լինենք դիմելու աւելի արմատական միջոցների, իսկ ինչո՞ւ չը դիմել դրանց հէնց այժմ՝ մի՞թէ քիչ են դեռ զոհերը...

Եթէ այսօր Թուրքական շահը պահանջէ դադարեցնել թշնամական գործողութիւնները և հաշտվել, կարո՞ղ ենք մենք վերջնականապէս վստահել ու հաւատալ նրան մեր ապագան. չէ՞ որ մենք միշտ պէտք է ականջներս սրած պահենք, զէնքը փէշներիս տակ պատրաստ, մշտական զինված խաղաղութեան մէջ... Այսօր Թուրքը ենթարկվեց մի ազդեցութեան, վաղն էլ կարող է փչել մի ուրիշ հողմ և նա նորից պէտք է տարուբերվի. դէհ եկէք նորից հաշտեցրէք, նորից լարեք ձեր բոլոր ուժերն ինքնապաշտպանութեան համար և այսպէս անվերջ, յաւիտեան... քանի որ կապրէք Թուրքին կպած, նրա հետ խճճված, մի տեղ նա ձեր սրտի մէջ բուն դրած, միւս տեղում դուք նրա բունը մտած...

Կարծում եմ շատ մեծ ռիսկի ենթարկած կը լինենք մեր գոյութիւնը «կուլտուրական ու խելօք» օրօրներով անգործութեան դատապարտելով, թմրեցնելով մեզ...: Մինչդեռ թըշնամին արթուն է, նա շարունակ պատրաստվում է... ինչպէս ամեն օր գուժում են Իգդիրի սահմանագլխից, Արաքսի ափերից...

Մի փոքր բան ևս. Հայ-Թուրքական հաշտութեան համար առաջարկվում են և մի քանի «պասիվ» միջոցներ, օրինակ հիմնել հայ-Թուրքական մի լրագիր, տալ գիւղերում ներկայացումներ ու դասախօսութիւններ, հրատարակել ժողովրդական գրքոյկներ:

Ի՞նչ օգուտ կարող է տալ հայ-Թուրքական մի լրագիր, քանի որ նրա դէմ կան մի քանի Թուրք լրագիրներ, որոնք իսկոյն պիտի չէզոքացնեն նրա գործունէութիւնը: Մի՞թէ այդ նոր թերթն էլ նոյն բանը չէ ասելու, ինչ որ մինչև այժմ այս մի տարում անընդհատ ասել են Կովկասի բոլոր հայ ու ռուս թերթերը և սակայն նրանց բոլոր ասածները եղել են աւետարան գայլի գլխի վրա:... Ցետոյ ներկայացումները. ո՞րքան պիտի կարողանան նըրանք նպաստել խաղաղութեան գործին, ո՞րքան պիտի ազդեն Թուրք գիւղացու բարքերի վրա. նա աւելի շուտ այդ ամենը ծաղրածութեան, «ղարագեօզ օյինի» տեղ կընդունի և կուշտ կը հռհռայ-ուրիշ ոչինչ...: Գրքոյկները ևս հազիւ թէ մեծ քանակութեամբ տարածվին գիւղերում և որ գլխաւորն է, որ և է բարոյական ներգործութիւն ունենան: Այնպէս որ այս վերջին միջոցները միայն փոքրիկ խիճեր են, իսկ հայ-Թուրքական հաշտութեան հսկայական շէնքի համար անհրաժեշտ են ծանր ու խոշոր հիմնաքարեր:..

Վերոյիշեալ բոլոր միջոցները, Թուրքերի հետ մի հիմնական հաշտութիւն կնքելու համար, մեզ թւում են շատ պակասաւոր, նոյն իսկ անօգուտ, ուստի քանի որ մեզ չեն ցոյց տուել աւելի համոզիչ ու գործնական օգուտ խոստացող միջոցներ, մեզ մնում է աւելի հակվել դէպի միւս կողմը, որը պահանջում է այնպիսի պայմաններ ստեղծել, որոնք այլ ևս անհնարին դարձնէին հայ-Թուրքական ընդհարումները, կամ աւելի ճիշտ—հային այնպէս անխոցելի դարձնէին, որ Թուրքն այլ ևս այնպէս հեշտութեամբ չը կարողանար վնասել նրան:

Այդ ուղղութեամբ գործելու առաջին ու անխուսափելի միջոցը հայի ինքնապաշտպանութիւնն էր, որն իսկապէս մինչև այժմ եղել է մեր գոյութիւնը պահպանելու միակ նեցուկը և որը մի և նոյն ժամանակ աւելի լաւ է Թուրքին խելքի բերել: Ցիշենք մի փոքրիկ, բայց փայլուն օրինակ. անցեալ փետրվարից մինչև մայիս, Երևանում ապարդիւն անցան հայերի բոլոր խաղաղասիրական ջանքերը «դէպքերի» առաջն առնելու համար: Իզուր էին մեր իրաւագէտ Մետաքսեանները թնդացնում քաղաքային խորհրդարանի դահլիճը «մուսուլման եղբայրներ» սրտայոյզ բացականչութիւններով. այո, դրանցով նրանք ոչինչ չը կարողացան հասկացնել մեր «դինայրի ղարդաշներին», մինչև որ... թնդացին հրացանները: Մայիսի 23-ի մի օրեայ հրացանաձգութիւնը աւելի լաւ խելքի բերեց Թուրքին, քան թէ մեր 3—4 ամսվայ երկար ու բարակ ճառերը, մեր պրօպագանդան... Այդպէս է եղել և ամեն տեղ:

Սակայն, մինչև ե՞րբ կռւել, մանաւանդ այնպիսի անապահով տեղերում, որ հայերի առաջ դիմադրութիւնները և մինչև իսկ յաղթութիւնները ոչինչ գրաւական չեն ներկայացնում ապագայում ևս անվտանգ լինելու համար: Իսկ չէ՞ որ մենք հաշտութեան խնդիրն ուզում ենք վճռել ոչ թէ կարճ ժամանակի համար, այլ եթէ կարելի է ընդմիշտ... Ահա այստեղ դուք կամայ թէ ակամայ կանգ էք առնում մի ուրիշ արմատական միջոցի վրա: Դա անապահով թուրքաշատ տեղերից սակաւաթիւ հայերին դուրս բերելը և աւելի հայաշատ տեղեր փոխադրելն է, որով կատարվելու է հայերի բաժանումը Թուրքերից և համախմբումն իրանց բուն երկրում:

ԱՆԿԱԽՆԵՐԻ ԿԼՈՒԲՈՒՄ

Անկախների կլուբի անդամների ժողովում փետրվարի 14-ին պրօֆեսոր Մ. Մ. Կովալեվսկին և Ա. Ս. Պոսնիկովը զեկուցումներ արեցին դեմօկրատիական ռեֆորմների կուսակցութեան խնդիրների և նրա ծրագրի հիմնական սկզբունքների մասին:

Պրօֆ. Մ. Մ. Կովալեվսկին բացատրեց կուսակցութեան նպատակները և նրա քաղաքական ծրագիրը: Դեմօկրատիական ռեֆորմների կուսակցութիւնը ընդարձակ համբերատարութիւն է ընդունում ամեն կարգի հայեացքների վերաբերմամբ և բացարձակ յայտարարում է, որ ծրագրի մասնաւոր կէտերի մէջ եղած տարբերութիւնները չեն կարող արգելք լինել կուսակցութեան կազմի մէջ մըտնելուն: Այդ տեսակէտից նա նմանում է սօցինեան անունը կրող բողոքական մի աղանդին,—որը կարծիքների ամենաընդարձակ ազատութիւն է թոյլատրում և իր ամենագըլխաւոր դօգմաներից մէկը համարում է—անհամբերողութիւն դէպի կարծիքների անհամբերողութիւնը: Կուսակցութիւնը կազմվում է ոչ թէ բաժան-բաժան անելու համար այն ոյժերը, որոնք ձգտում են խաղաղ ճանապարհով մեր երկիրը նորոգել, այլ, ընդհակառակը՝ այդ ոյժերը միացնելու և կենտրոնացնելու համար, և բոլորովին նպատակ չունի խանգարելու բոլոր ձախակողմեան կուսակցութիւններին միանալու անհրաժեշտութեանը իրանց ծրագիրների ընդհանուր սկզբունքները պաշտպանելու համար: Քանի-քանի քաղաքական կուսակցութիւններ կային Անգլիայում, Ֆրանսիայում, Ամերիկայում, բայց երբ մօտենում էր պարլամենտական պայքարը, սկսվում էր քաղաքական կեանքը, նրանք բոլորը ձուլվում էին երկու կուսակցութիւնների մէջ—կառավարչական և ընդդիմադրական: Ակտիվ քաղաքականութեան խնդիրների վերաբերմամբ երկու պատասխան միայն կարող է լինել—«այո» կամ «ոչ», իսկ երրորդ պատասխանը,—«ոչ այո և ոչ էլ ոչ»,—կարող է միայն ոչ անկեղծ կուսակցութիւններին յատուկ լինել:

Մեր կուսակցութիւնը չէ կարելի ոչ աջակողմեան և ոչ ձախակողմեան թևեր համարել, և ոչ էլ մանաւանդ կենտրօն: Այդ պատճառով էլ միանգամայն սխալ է պնդելը, թէ մեր կուսակցութիւնը սահմանադրական-դեմօկրատիական կուսակցութեան աջ թևն է կազմում, իսկ մի քանի խնդիրների վերաբերմամբ նոյն իսկ սօցիալ-դեմօկրատիական կուսակցութեան ձախ թևն է կազմում: Մեր կուսակցութիւնը պարզապէս առողջ մտքի կուսակցութիւն է, բառիս այն իմաստով, որ նա անհրաժեշտ է համարում հաշւի առնել պատմական անցեալը, որ Ռուսաստանը չէ կարող յանկարծ միապետութիւնից բնական դրութեան անցնել, երբ հարկաւոր է դեռ ուրոշել թէ ինչպիսի իշխանութիւն, ինչպիսի կառավարչական կարգ պիտի ստեղծել: Կառավարչական ձևը ազատ ընտրութեան գործ չէ, նա կախված չէ անհատական համակրութիւնից կամ հակակրութիւնից. նա պիտի համապատասխան լինի ազգի պատմական անցեալին, ժողովրդային մասսաների պատմութեան ընթացքում իւրացրած հաւատալիքներին, ցանկութիւններին, սովորութիւններին, համակրանքներին: Մենք կարծում ենք, որ Ռուսաստանը միշտ մնացել է, մնում է այժմ և կը մնայ միապետութիւն, և մեր մերձաւոր նպատակը այն պէտք է լինի, որ միապետութիւնը ինքնակալութիւնից փոխվի սահմանադրականի:

Մենք հակառակ ենք ոչ թէ սահմանադիր ժողովին, այլ այն բանին, որ բոլոր գոյութիւն ունեցող իրաւունքները, օրէնքները, սովորութիւնները, հաւատալիքները անհետանան, ամեն ինչ նորից ստեղծվի: Այդպիսի մի միտք չէ արտայայտվել նոյն իսկ ֆրանսիական սահմանադիր ժողովում 1789 թւին: Ով մեզանում սահմանադիր ժողովի մասին է խօսում, երևի, մօտաւորապէս իր մտքում պատկերացնում է այնպիսի մի դրութիւն, երբ ժամանակաւորապէս ոչնչացված պիտի լինին ամեն մի իշխանութիւն և առօրեայ կեանքի բոլոր ձևերը: Բայց պատմութեանը այդպիսի բան ծանօթ չէ: Մեծ ֆրանսիական յեղափոխութեան սահմանադիր ժողովը յիրաւի որ ազգային էր և մինչև իսկ պաշտօնապէս էլ այդպիսի անունն էր կրում: Նա իրան նպատակ էր դրել ոչնչացնել ոչ թէ սեփականութիւնն ու կառավարութիւնը, այլ հաստատել սահմանադրութիւն, փոխարինել անսահման միապետութիւնը սահմանափակ միապետութեամբ և պատասխանատուութեան ենթարկել բռնապետութիւնը ներկայացուցչական պալատի առաջ, մի և նոյն ժամանակ նա զբաղված էր դատաստանական կարգերը փոխելով, տեղական ինքնավարութեան, բանւորական և ագրարային խնդիրները լուծելով:

Դեմօկրատական ռեֆորմների կուսակցութիւնը, չը մերժելով որ ապագայ Պետական Դումայն սահմանադիր ժողովի պաշտօնը կատարէ, միևնոյն ժամանակ կը ցանկանար, որ նա չը յետաձգէր ագրարային ու բանւորական խնդիրների լուծումը, թէև այդ խնդիրները չեն վերաբերում երկրի հիմնական օրէնքներին, այն օրէնքներին, որոնց մշակելը միայն բաժինն պիտի ընկնէր սահմանադիր ժողովին: Մենք վախում ենք վերաբերվում միակ ներկայացուցչական ժողովի կողմից կառավարչական իշխանութիւնը իր ձեռքը գցելու հարցին,—շարունակեց հռետորը,—մենք գիտենք թէ ինչպիսի վտանգ է ներկայացնում միակ կամերան, որին օրինակ կարող է ծառայել Երկարատև պարլամենտը Անգլիայում և կօնվենտը Ֆրանսիայում: Միակ կամերան իւրացնում է ինքնակալ իշխանութեան բոլոր գործողութիւնները, իւրացնում է օրէնսդրական և գործադիր մարմինների ֆունկցիաները ու դառնում է բռնակալ: Այդ պատճառով էլ մենք կողմնակից ենք երկպալատեան ներկայացուցչութեանը, երկու կամերաների սիստեմին: Մեր պետական խորհուրդը, այն ձևով, ինչպէս որ մտածել էր Սպերանսկին, ոչ այլ ինչ էր ներկայացնում, քան մի բարձրագոյն վարչական խորհուրդ, գործադիր իշխանութեան մի օրգան: Նա հէնց ադմինիստրատիվ հիմնարկութիւն էլ մնում է: Մենք ցանկանում ենք, որ Վերին պալատը կազմված լինի զեմսկի և քաղաքային հիմնարկութիւնների պատգամաւորներից: Այդ մեզ համար մանաւանդ թանգ է նրա համար, որ մենք կը ցանկանայինք, որ պետական բարձրագոյն հիմնարկութեան մէջ տեղական շահերն էլ ներկայացված լինէին: Վերին պալատը ոչ թէ ազնուականների, վաճառականների ու բօրսայի ներկայացուցչութիւն է, այլ տեղական շահերի ներկայացուցչութիւն, մի օրգան, որը պիտի վերաքննէ ժողովրդային ներկայացուցիչների որոշումները, որոնք ընդհանուր պետական նպատակներին են ձգտում, և որը միջոց տար առանձին շրջանների շահերին արտայայտվելու ու ներգործական դեր կատարէր օրէնսդրութեան ընթացքի և վարչական պրակտիկայի վերաբերմամբ: Մենք մտածում ենք նոյնպէս, որ զօրքի վրա հիմնվող, ամենակարող միապետի ու երիտասարդ ժողովրդային ներկայացուցչութեան մէջ պիտի մի միջնորդ դնել, յանձին Վերին պալատի, այնպէս, որ և է միջնորդի բացակայութեան դէպքում, գերիշխանութիւն ունենալու համար նրանց մըղած մրցումը կարող է վճռական յաղթանակի փոխվել այդ երկու հակառակորդներից մէկի կամ միւսի համար, և որովհետև մօտ ապագայի մէջ ամենաթոյլը դեռ ևս ժողովրդային ներկայացուցիչների պալատը կը լինի, որին աւելի հեշտութեամբ կարելի է արձակել, քան Վերին պալատը, ուստի հէնց ազատութեան շահը պահանջում է, որ այդ երկու հակառակորդների միջև մի մշտական միջնորդ լինի, այնպիսի մի միջնորդ, որի արմատները զեմսկի և քաղաքային ինքնավարութեան մէջ լինին և որը, սրանց հետ սերտ հաղորդակցութեան մէջ գտնվելով՝ շարունակ սրանցից ստանայ իր ոյժը և իր հեղինակութիւնը: Սահմանադրական-դեմօկրատական կուսակցութեան նման, մենք շատ լայն ենք հասկանում անհատի իրաւունքները և քաղաքացիական ազատութեան իրաւունքները, մենք կողմնակից ենք բոլոր քաղաքացիների լիակատար հաւասարութեանը ազատութեան մէջ, հակառակորդ ենք դասակարգային առանձնաշնորհումներին ու դերադաս իրաւունքներին և պահանջում ենք, որ չինովնիկներն էլ, միւս բոլոր քաղաքացիների հետ հաւասարապէս, դատի ենթարկվեն և որ ոչ ոք պատիժ չենթարկվի առանց դատարանի: Պէտք է հոգ տանել, որ դատարանը ազատութեան վրա հսկող ու նրան պաշտպանողը լինի:

Մենք անմատչելի բարձրութեան վրա ենք դնում միայն Թագաւորին, որի անձնաւորութիւնը պիտի մնայ սրբազան և անձեռնմխելի: Մենք այն համոզման ենք, որ, բացի Միապետից, ամբողջ կառավարութիւնը պատասխանատու լինի իր գործունէութեան համար ոչ միայն դատարանի առաջ, այլ և ժողովրդային ներկայացուցիչների առաջ, բացի դատաստանական, նաև քաղաքական պատասխանատուութեան ենթարկվի:

Ռուսաստանի քաղաքական կուսակցութիւններից շատերի նման, մենք էլ մեծ նշանակութիւն ենք տալիս ընդհանուր կրթութեանը և ընդհանուր ձայնատուութեանը: Մենք պահանջում ենք ընդհանուր ձայնատուութիւն, համարելով այդ միակ ճանապարհը՝ Ռուսաստանը դեմօկրատիական միապետութիւն դարձնելու համար, սակայն ընդհանուր ձայնատուութեան իրաւունքից մենք աջող հետևանքներ ենք սպասում միմիայն ընդհանուր կրթութիւն եղած դէպքում, որը ժողովրդի ընդարձակ շրջաններին միջոց կը տայ գիտակցաբար վերաբերվել ընտրութիւններին: Կառավարչական խնամակալութեան տեղը,—խնամակալութիւն, որի շնորհիւ այնքան փոքր է գրագէտների տոկոսը,—պիտի այսուհետև բռնէ անհատական ու հասարակական ձեռներէցութիւնը մասսաների մէջ կրթութիւն տարածելու գործում: Ժողովրդի կրթութիւնը անյաղթելի խոչընդոտների էր հանդիպում և այն սահմանափակումների շնորհիւ, որ կառավարութիւնը դրել էր, ի նկատի առնելով ուսումնարան մտնել ցանկացողների սեռը, ծագումը և դաւանանքը: Այդ սահմանափակումներին ու արգելքներին պէտք է վերջ դրվին: «Խոհարարուհիների որդիներին» չեն յիշեցնի, ինչպէս այդ անում էր մինիստր Դելիանովը, թէ նրանց աւելի լաւ է չուսանել, որովհետև այդ տեսակ պետական իմաստութիւնը այժմ աններելի յիմարութիւն է համարվում. Հրէաներին այլ ևս չեն ասի, թէ նրանց կարելի է կառավարութեան հիմնած ուսումնարաններում ընդունել այն դէպքում միայն, երբ նրանց թիւը որոշ տոկոսից չէ անցնում: Չէ՞ որ այդպիսի տոկոսների մասին խօսք չէ լինում, երբ նրանց պատերազմի են ուղարկում կամ երբ նրանց վրա հարկեր են դնում: Պատմութիւնից ժառանգած միապետութիւնից կապերը չը խզելով և նրա համար նոր յենարան փնտրելով ժողովրդի ազատութեան ու իրաւունքների հաւասարութեան մէջ, դեմօկրատական ռեֆորմների կուսակցութիւնը հաւասարապէս հակառակ է թէ ազգի ամբոխի տիրապետութեանը և թէ նրա վիժմունքին (ucradie)—ժողովրդական ցեզարիզմին. Նա ցանկանում է ազատութիւն իրաւունքի մէջ և հաւասարութիւն ազատութեան մէջ:

(Կը շարունակվի)

Ի ՆՊԱՍՏ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ

L'Eastern question Association-ը, որի հովանաւորութեան տակ կազմվել էր արդէն 1904 թւի գարնանը մի միջազգային կօնֆէրենցիա ի նպաստ Թիւրքիայի ճնշված ժողովուրդների դատին, ուղղել է դարձեալ հետևեալ նոր հրաւէրը բազմաթիւ քաղաքական, հասարակական գործիչների, գիտնականների և գրականագէտների, ամեն կուսակցութեան և ամեն երկրի պատկանող:

«Ինձ վրա պարտք է դրված խնդրել ձեզ, որ բարեհաճէք մասնակցել Արևելեան հարցին վերաբերող միջազգային կօնֆերենցիային, որը պէտք է տեղի ունենայ Լօնդօնում, 1906 թ. փետրվարի 23-ին (ն. տ.) Ուէստմինստէր Պալէս Հօտէլում և որի նպատակն է արտայայտութիւն տալ մարդկութեան բարեկամների անկեղծ ըղձանքներին Ֆրանսիայում, Իտալիայում, և Անգլիայում, առանց կուսակցութեան խտրութեան, ի նպաստ օսմանեան կայսրութեան մէջ ապրող ճնշված ժողովուրդների դրութեան բարւոքման, առանց ցեղի և կրօնի զանազանութեան, ներմուծելով ազդու վարչական ռէֆօրմներ, համաձայն այն խոստումների, որ արել է ինքը Թուրք կառավարութիւնը և համաձայն յիշեալ կառավարութեան այն միջազգային յանձնառութիւնների, որոնց շարքում պէտք է թուել մանաւանդ Բերլինի դաշնագրի 23-րդ (մակեդոնական) և 61-րդ (հայկական) յօդուածները:

Չափազանցութիւն չի լինի, ի հարկէ, եթէ շեշտենք այս կօնֆերենցիայի կարևորութեան և արժէքի մասին, որ կարող է ունենալ այս կրիտիքական րօպէին, և կարելի է նախատեսել, որ ազատութեան մէջ համերաշխ և բարեկամ այդ երեք ազգերի ներկայացուցիչների միացեալ յայտարարութիւններն ու ջանքերը պիտի գործեն ահագին ազդեցութիւն իրանց կառավարութիւնների գործողութիւնների և դէպքերի զարգացման վրա՝ մարդասիրական գաղափարներին նպաստաւոր ոգով և ի նպաստ մի աւելի ազդու քաղաքականութեան, ընդհանուր պարտականութիւնների իրագործման համար:

Կօնֆերենցիային պիտի նախագահէ բարոն դ'Էստուրնէլ դը Կօնստանը և որին ներկայ պիտի լինեն նոյնպէս քաղաքական, եկեղեցական և գրականական աշխարհի նշանաւոր անձինք, որոնք համակրում են ճնշված ժողովուրդների դատին և համամիտ են միջազգային կարծիքի և գործողութեան կազմակերպումին:

Փետրվարի 23-ի երեկոյեան ժամի 7 և կէսին Ուէստմինիստր Պալէս Հօտէլում տեղի պիտի ունենայ մի ճաշկերոյթ, Կոմիտէի նախաձեռնութեամբ և պ. Ֆ. Ս. Ստէվէնսընի նախագահութեան տակ:

Հաճեցէք, խնդրեմ, ինձ յայտնել ձեր դիտաւորութիւնը թէ արդեօք մտադի՞ր էք մասնակցել կօնֆերենցիային և ճաշկերոյթին և ցանկանում էք, որ մեր բարեկամներից մէկը հաճոյքն ունենայ ձեզ ընծայել իր հիւրընկալութիւնը՝ ձեր՝ Լօնդօնում անցկացրած ամբողջ ժամանակամիջոցում:

Ընդունեցէք, և այլն

Քարտուղար՝ Է. Ատկին

Այս կօնֆերենցիան տեղի է ունեցել արդէն: Մենք կը խօսենք նրա մասին մի այլ անգամ:

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶԻ» Գ. Պ. ՔՆՆԱԴԱՏՆԵՐԻՆ.

Ես ինձ բախտաւոր եմ զգում, որ իմ «Մանկական Պարտէզ» ձեռնարկը հնարաւորութիւն տուեց յայտնելու իրանց կարծիքները շատերին, որոնք հետաքրքրւում են մանուկների նախադպրոցական կրթութեամբ։ Խօսեց մանկական պարտէզների մասին, ծխական դպրոցներին կից մանկական պարտէզներ բանալու անհրաժեշտութեան մասին, և որ ցանկալի կը լինէր բանալ ժողովրդական մանկական պարտէզ (մանաւորապէս ներկայ հանգամանքներում), ցերեկվայ ապաստարանի ձեւով, այս կամ այն պարապմունքի դասաւորութեան եղանակների մասին (ձեւերի մասին) նախադպրոցական հասակի երեխաների հետ, յատուկ մանկավարժական թերթի հրատարակութեան մասին, այնպիսի մի թերթի, որտեղ կարողանային մայրերը փոխանակել և այլն։

Որ անշուշտ քննադատութիւնը, մտքերի, հայեացքների և տեսակէտների փոխանակութիւնը, կրթութեան այս կամ այն սիստեմի մասին մեզ կը տանեն մինչև այնտեղ, որ մենք, նորահաս սերունդի առաջնորդողներս, ինչպէս ծնողները, այնպէս և դաստիարակները, ընդհանուր ոյժերով առաջ կը տանենք մեր երեխաների կրթական գործը, դա անկասկած է։

Ձեռք զարկելով ձեռնարկիս աշխատասիրութեանը, ես առաջաբանում նկատում եմ. «շատ յաճախ ծնողները դիմում էին ինձ, հարցնելով՝ ինչպէս և ինչով զբաղեցնել նախադպրոցական հասակ ունեցող երեխաներին։ Եւ որովհետև այսպիսի խնդիրները և դիմումները շատացել էին և յաճախ էին կրկնւում, վճռեցի կազմել այնպիսի մի ձեռնարկ, որը տար մայրերին և դաստիարակչուհիներին գործնական ցուցմունքներ՝ պարապելու համար նախադպրոցական հասակ ունեցող երեխաների հետ։ Այդ գիրքը կազմելու ժամանակ ես օգտվել եմ զանազան ազգութիւնների նշանաւոր մանկավարժների ձեռնարկներից, և ինչպէս տեսնում էք, ես ոչ մի տեղ չեմ յիշատակել, թէ գիրքս կազմել եմ Ֆրէօբէլեան սիստեմով»։

Որովհետև քիչ թէ շատ լուրջ փորձ՝ ոչ միայն տեսականապէս այլ և գործնականապէս լուծելու համար փոքրահասակ մանուկների կրթական հարցը պատկանում է Ֆրէօբէլին, որն ունի շատ հետևողներ Արեւմտեան Եւրոպայում և Ամերիկայում, ես կամենում էի ծանօթացնել ընթերցողներին նրա կենսագրութեան, աշխարհայեացքի և կրթութեան սիստեմի հետ։ Այս բոլոր գլուխներին կցելով պարապմունքները, խաղերը, և երգերը, ես նկատեցի, որ գրքի ծաւալը մեծանում է։ Ի՞նչ անել։ Հէնց այս տատանումների պատճառով՝ գրել Ֆրէօբէլի մասին թէ ոչ, ես գործեցի այն շեղումը որի մասին ճիշտ նկատել էր յարգելի մանկավարժ պ. Մխիթարեանը «Մշակ»-ի 20-րդ №-ում։ Ես կաշխատեմ մանկական «Հասկեր» ամսաթերթի մանկավարժական բաժնում զետեղել բաց թողած գլուխը—Ֆրէօբէլի աշխարհայեացքը և կրթական սիստեմը։

Կազմելով այդ գիրքը, ես աչքի առաջ ունէի տալ ձեռնարկ և ոչ դասագիրք. ահա թէ ինչու բոլոր բաժիններում ես միայն ցուցմունքներ և օրինակներ եմ տուել, իսկ բոլոր աշխատանքների կարգաւորութիւնը և յետագայ զարգացումը թողնում եմ մայրերի և դաստիարակչուհիների հնարագիտութեանը։

Այսօր, երբ ծնողները ամեն հնար եղածն անում են որ իրանց երեխաներին դաստիարակութիւն և զարգացում տան, մանկավարժները իրանց նպատակ են դնում՝ պարզել բոլոր մարդկային ընդունակութիւնները, ներշնչել նոր սիստեմներ և յարմարացնել նրանց գործին։

Այս սիստեմները միևնոյն նպատակն ունեն. մանկութիւնը ուշադրութեամբ ուսումնասիրել, որպէսզի սեփական միջոցների ուսումնասիրութիւնը բաւարարութիւն տայ իր բնաւորութեան անհրաժեշտութեանը։ Այս անհրաժեշտութեան մէջ ամենագլխաւորը, ինքնածինը և փոքրիկների համար ազատը՝ ինքն իրան և իր շրջապատող իրերի հետ խաղալու պահանջն է։

Այժմ հարցն այն է, թէ կա՞ն արդեօք բոլոր փոքր երեխաների հետ միասին սովորեցնելու և դաստիարակելու արդէն պատրաստ կաղապարներ, իսկ մասնաւորապէս կարո՞ղ են արդեօք նրանք Մանկական պարտէզներ ներկայանալ այն ձեւով, ինչ ձև որ ստացան Ֆրէօբէլին ճիշտ հետևողների ձեռքի տակ։ Դրանցից մեծ մասը աշխատում էր անխախտ պահել ուսուցչի պատուիրանները, չը յանդգնելով ոչ մի խօսք փոփոխել դրանց մէջ այն բանի մասին, թէ ինչպէս պէտք է դաստիարակել ամենափոքր երեխաներին։ Այդ փոփոխութեան մասին Ռուսաստանում վաղուց խօսողներ եղան։ Այդ հարցի վերաբերմամբ նշանաւոր կին-գործիչ յարգելի Ա. Ս. Սիմոնովիչը (որն ի միջի այլոց 1872 թ. առաջինը բացեց Թիֆլիսում մանկական պարտէզ) ոչ միայն իր մանկավարժական ամսաթերթումն էր առաջ տանում հակա-Ֆրէօբէլեան սիստեմի գաղափարները, այլ և Թիֆլիսի և Պետերբուրգի իր մանկական պարտէզներում նա գործնականապէս էլ մեծ աջողութեամբ ապացուցեց թէ որ աստիճանի օտար են Ֆրէօբէլի սկզբունքները և սիստեմները մանկական աշխարհի համար։ Այնուհետև յարգելի պրոֆեսոր մանկավարժ հոգեբան Կապտերևը, որ միշտ աշխատում էր իր ունկնդրուհի Ֆրէօբէլիականների շրջանում առաջ տանել նոր գաղափարներ՝ այն է թէ ինչպէս ազատել երեխաներին բնազանցական փիլիսոփայութեան ճանկերից։ Առաջ եմ բերում նրա ինձ ուղղած նամակից մի փոքրիկ քաղուածք. «Ֆրէօբէլը փոխանակ երեխայի բնութիւնը ուսումնասիրելու, առաջին տեղը տալիս է տեխնիկային, բայց Ֆրէօբէլը և նրա հետևողները գործում էին իրարից տարբեր պատմական հանգամանքների մէջ։ Նրա ժամանակ բնազանցական փիլիսոփայութիւնն էր տիրապետում, իսկ այժմ կան իրական (րէալ) բնաւորութիւն ունեցող հոգեբանական գործեր և ծնունդ է առնում մանկական հոգեբանութեան մի նոր ճիւղ»։

Աւելի լաւ, աւելի ազդու խօսեցին այդ բանի մասին արեւմուտքում։ Ես առաջ կը բերեմ Frederick Eby-ի այն յօդուածի (Phe Pedagogical Seminary, July, 1900) ամենից հետաքրքրական կտորները, որը իրանից ներկայացնում է, ինչպէս գրում է պրոֆեսոր Ստէնլի Հօլլ-ի պէս հեղինակաւոր դատաւորը—«ամենից առողջամիտ և լաւատեղեակ դատողութիւնը հարցիս մասին, բոլոր այն դատողութիւնների և եզրակացութիւնների մէջ, որ երևացին գրականութեան մէջ այս վերջին տարիները»։ Թէ սիստեմի վերլուծութիւնը, և թէ զուգընթացաբար կատարած հարցումներ «մանկական պարտէզներում» աշխատող՝ գործին տեղեակ «պարտիզպանուհիներից» Eby-ին բերին հետևեալ եզրակացութիւններին։

(Կը շարունակուի)

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Փետրվարի 20-ին

Փետրվարի 18-ին կայացաւ քաղաքային ատեանի օգնականի ընտրութիւնը։ Թերթիկներով թեկնածուներ առաջարկվեցին՝ Ս. Տէր-Գրիգորեան—7 ձայնով, Ի. Շահվերդեան—6 ձայնով, Ս. Ամիրխանեան—5 ձայնով, Ն. Տէր-Մաթէոսեան (քաղաքային ատեանի ներկայ օգնական)—4 ձայնով, Ա. Շահվերդեան—2 ձայնով և Ս. Տէր-Ղազարեան ու Կ. Նազիրով մէկական ձայնով։ Դրանցից՝ Ս. Ամիրխանեան, Ն. Տէր-Մաթէոսեան, Ա. Շահվերդեան, Ս. Տէր-Ղազարեան և Կ. Նազիրով հրաժարվեցին քուէարկվելուց. մնացածները դրեցին քուէատուփեր։ Մի քանի ձայնաւորներ խնդրեցին Ն. Տէր-Մաթէոսեանից դնել քուէատուփ և սա զիջեց նրանց ցանկութեան։ Տէր-Գրիգորեանը ստացաւ 6 սպիտակ և 4 սև քուէ, Ի. Շահվերդեան՝ 4 սպիտակ և 6 սև, Տէր-Մաթէոսեան՝ 7 սպիտակ և 3 սև։ Ընտրված յայտարարվեցին Ն. Տէր-Մաթէոսեան և Ս. Տէր-Գրիգորեան։ Տէր-Մաթէոսեանը ստանալով մէկ ձայն աւելի, պարզ է, որ կը հաստատվի պաշտօնում, մանաւանդ, որ այդ պաշտօնն այժմ էլ վարում է։

Այս ընտրութիւնները ծանր տպաւորութիւն թողեցին կողմնակի ներկայ գտնվողների վրա, որոնցից շատերը արդար զայրոյթով և բարկութեամբ լցվել էին, դատապարտելով ձայնաւորների ոչ գովելի վարմունքը։ Եւ, յիրաւի, միթէ պատիւ է բերում մեր քաղաքի հայերին զանազան օյինբազութիւններ անել դումայում։ Դրանց կեղծաւորութիւնը աչքաբաց դարձաւ, նրանց դիմակները պատռվեցին։ Ահա փաստեր։ Տէր-Գրիգորեան թերթիկներով ստացաւ 7 ձայն, իսկ քուէներով—6, Ի. Շահվերդեան թերթիկներով—6, քուէներով 4, Ն. Տէր-Մաթէոսեան՝ թերթիկներով—4, քուէներով 7։ Քուէներին նայելով՝ պարզ երևում է, որ ձայնաւորների իսկական թեկնածու եղել է Ն. Տէր-Մաթէոսեանը։ Շատ բարի։ Ոչ ոք էլ իրաւունք չունի պահանջել իրան ընտրելու։ Բայց այս ինչ խարդախութիւն է, ինչ փարիսեցութիւն է, որ ձայնաւորները թերթիկներով Ի. Շահվերդեանին և Ս. Տէր-Գրիգորեանին, տալով Տէր-Մաթէոսեանից շատ ձայներ, զայթակղեցնում են, դրդելով նրանց քուէատուփեր դնել և ապա փառաւորապէս սեւացնում, թէև Տէր-Գրիգորեանին ընտրեցին նրա սիրտը չը կոտրելու համար, քաջ իմանալով, որ նա լինելով երկրորդ թեկնածու՝ անշուշտ չի հաստատվի պաշտօնում և ասպարէզը կը մնայ Ն. Տէր-Մաթէոսեանին։ Այս վարմունքը տգեղ արարմունք է և բոլորովին վայր է գցում ձայնաւորների վարկը ու պատիւը և անջնջելի արատ թողնում նրանց վրա...

Գեղեցիկ հարցեր է բարձրացնում մեր նոր քաղաքագլուխ Վ. Ենիկոլոփեանը։ Փետրվարի 14-ի նիստում նա առաջարկեց նախապատրաստութիւններին ձեռնարկել Սղնախում քաղաքային հիւանդանոց բանալու, որի համար նա, հետևելով Ախալցխայի օրինակին, առաջարկում էր՝ հանգանակութիւն սկսել Թիֆլիսի նահանգում և Բագու քաղաքում սեփական շինութիւն կառուցանելու և ապա, երբ շինութիւնը պատրաստ կը լինի, քաղաքը տարեկան որոշ գումար կը տայ հիւանդանոցը պահելու համար։ Դուման ընդունեց քաղաքագլխի առաջարկութիւնը, աւելացնելով, որ հանգանակութիւն լինի նաև Պետերբուրգում և Մոսկվայում, որտեղ կան բաւականաչափ սղնախցիներ։ Հանգանակութիւն բանալու համար որոշվեց միջնորդութիւն յարուցանել Փոխարքայի առաջ։ Նոյն ժողովում պ. Ենիկոլոփեան առաջարկեց նոր սպանդանոց կառուցանել Թելաւի օրինակով, որի համար հարկաւոր կը լինի մօտ 2000 րուբլի և մորթելու անասունների համար քաղաքային անասնաբակը (скотопригонный дворъ) շինել։ Այս առաջարկութիւնն ևս ընդունվեց։ Ձայների մեծամասնութեամբ ընդունվեց նոյնպէս քաղաքագլխի առաջարկութիւնը՝ քաղաքային անշարժների գնահատման տուրքը դարձնել դարձեալ 8% այս տարի քաղաքի պարտքերը հանգցնելու համար։

Այս հարցերը շատ գեղեցիկ են և մենք ի սրտէ ողջունում ենք և ջերմ ցանկանում իրագործված տեսնել նրանց, սակայն այսպիսի գեղեցիկ հարցերը շատ են յարուցվել Սղնախում, բայց և շուտով մոռացութեան տուել։ Մաղթենք, որ այս անգամ հիասթափված չը մնանք...

Մի նկատողութիւն ևս։ Քաղաքային հիւանդանոց բանալու հարցը մեր վաղեմի փայփայած իղձն է, բայց ժողովրդական առածն ասում է «մի ձեռքով անկարելի է երկու ձմերուկ բռնել»։ Հայոց դպրոցի համար պէտք է անպատճառ շինութիւն կառուցվի և Վ. Ենիկոլոփեան՝ լինելով և քաղաքագլուխ և դպրոցի հոգաբարձու՝ անպատճառ պէտք է գերադասութիւն տայ նախ դպրոցին, որովհետև սա աւելի հարկաւոր է։ Միաժամանակ հանգանակութիւն սկսել և դպրոցի և հիւանդանոցի համար անկարելի է և մէկը կը խանգարէ միւսին։

Ի դէպ անցեալ տարի մայիսին բժիշկ Բուդաղեան Պետերբուրգից գրել էր, որ եղբայրներ Տէր-Մաթէոսեաններ կամենում են նուիրել Սղնախին իրանց տունը քաղաքում հիւանդանոց բանալու համար։ Այս մասին ոչ մի գրութիւն չէ ստացված քաղաքային վարչութեան մէջ, ուստի ցանկալի է, որ բժիշկ Բուդաղեան կամ Տէր-Մաթէոսեաններ բացատրութիւն տան այս մասին «Մշակում»։

Այս օրերս Սղնախ ժամանեց նոր գաւառապետ Արնոլդ, որը գեղեցիկ անուն է թողել Ղազախի գաւառում։ Քաղաքացիները 500 ստորագրութեամբ խնդիրներ ուղարկեցին Կովկասի Փոխարքային և պրոկուրորին, որ քարկոծված գողերի պատասխանատուութիւնն ընկնում է ամբողջ քաղաքի վրա և առանձին անհատներին չը մեղադրեն սրանում։

Վէլիսցիխէ գիւղում բացվել է հայոց դպրոցը։ Լագոդեխում ևս պատրաստութիւններ են տեսնում դպրոց բանալու։ Ցանկալի է, որ Ցարսկի-Կօլօդցի հասարակութիւնը ևս մտածէ եկող ուսումնական տարվանից իր համար դպրոցը վերաբանալու։

N. N.

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Յունվարի 11-ին

Անդրկովկասը տագնապալի շրջանի մէջ է...։ Հուր, սրածութիւն, աւեր, կոտորած, ալան ու թալան... դրանք սովորական երևոյթների շարքն են անցել։

Եւ յիրաւի, քիչ են զարմանք պատճառում Բագու, Շուշի, Գանձակ և այլ տեղեր տեղի ունեցած անմիտ կոտորածն ու թալանը։ Համարեա տեղ չը մնաց՝ որ չը վարակվէր այդ ախտով, որ ցոյց չը տար իր անմտութիւնն ու անհեռատեսութիւնը. էլ անկիւն չը մնաց՝ որ չը շաղախվէր անմեղների արիւնով. էլ ընտանիք կամ տուն չը մնաց՝ որ անփոխարինելի վնաս չը կրէր...

Ամեն տեղ գիտէին՝ որ նախանձելի հետևանքի չի հասցնի այդ—բարեկեցութեան տեսակէտից բացասական—շարժումը. սակայն, իմանալով հանդերձ, չէին կարողանում անտարբեր մնալ, զսպել գազանային կրքերը. անզօր դարձան դիմադրելու նենգաւորի չարամիտ կոչին...

Սակայն, ինչպէս մի անգամ էլ բաղդ ենք ունեցել ասելու, այժմ էլ կարող ենք պարծանքով յիշել, որ Նուխին կարող է համարվել այն հազուագիւտ վայրերից մէկը՝ որ լաւ ըմբռնել է խաղաղ կեցութեան գերակշռութիւնը եղբայրասպանութեան յիմար փորձերից։ Կարելի է, և իրաւունք ունի պարծենալու այս քաղաքը իր այն նկատելի բարոյական յատկութեամբ, որով կարողացաւ «շէյթանի» չարանենգ միտումները անյաջող դարձնել, հանդիսանալով իբրև մի պատկառելի և անզուգական օրինակ։

Աւելորդ կը լինէր ասել, որ Նուխին կը շարունակէ միայն այդպէս և անմիտ արձագանք չի տայ այն քաղաքներին, որոնք իրանց անխոհեմ քայլի շնորհիւ՝ հասել են ծայրայեղ աղքատութեան, ուր հանգստութիւնն ու խաղաղ կեանքը երազ օրեր են դարձել։ Մեզ այդպէս կարծելու տրամադրում է և այն հանգամանքը, որ Նուխին՝ Բագուի, Նախիջևանի, Շուշու, Գանձակի դէպքերի գոյժը առնելով, միանգամայն անտարբեր մնաց, կարողանալով չը հետևել չար օրինակին։

Սակայն զուր չէ ասված՝ թէ «Երուսաղէմում էլ շուն կայ.» և, պէտք է խոստովանել, որ Նուխին էլ անցած որոշ ժամանակաշրջանում, գուցէ, գերծ չը մնար այդ տիղմի մէջ խրվելուց, եթէ չը լինէին տեղիս հայ և մահմեդական ազգաբնակութեան մի քանի առաջնակարգ մարդկանց արտակարգ հոգացողութիւններն այդ մասին։ Հասարակական բուռն շնորհակալութեան միանգամայն արժանի են այդ տեսակէտից այն անձինք, որ առանց խնայելու նոյն իսկ իրանց սեփական միջոցները, ամեն կերպ աշխատում էին հեռու պահել քաղաքը չարագուշակ փոթորիկներից. ինչու և տեղիս Թուրք տարրը, ինչպէս և հայերը՝ իրար հետ բարեկամական յարաբերութեան մէջ են. կեանքը նորմալ ընթացքով է առաջ գնում, հասարակութիւնը՝ ազատ անտեղի ծանր հոգսերից՝ զբաղվում է իր առաջադիմութեան գործերով։

Ցանկալի կը լինէր, որ ուրիշ քաղաքներ էլ կարողանային օրինակ վերցնել Նուխուց։ Նուխին արժանի է այդ պատւին. նա խոհեմ գործունէութեամբ ցոյց տուեց իր դրական յատկութիւնների գերազանցութիւնը։

Մինաս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ [1]

Շուշի, յունվարի 20-ին

Խնդրում եմ խմբագրութեան տեղ շնորհել այս երկտողիս թերթի մօտակայ համարներից մէկում։

«Տարազ» շաբաթաթերթի անցեալ տարվայ (նոյեմբերի 13-ին) 33-րդ համարում Յ. ստորագրութեան տակ ծածկված Թղթակիցը՝ իր երկտողով յայտարարում է ի լուր աշխարհի, թէ իբր իմ առաջնորդութեան օրօք «բարեփոխութիւն, նորութիւն երևի չի լինի» և թէ «քահանայացուներից փող են առնում»։

Ես «Տարազ» չեմ ստանում, հետևապէս և ուրիշներից եմ լսել այդ մասին. և որովհետև քաղաքումս էլ յիշեալ շաբաթաթերթը մի ջուխտ ու կէս բաժանորդ ունի միայն, այդ պատճառով չը կարողացայ աւելի շուտ ձեռք բերել այդ համարը, քան դեկտեմբերի վերջերը։ Պօստային գործադուլն էլ վերջանալուց յետոյ քաղաքը խիստ տենդային դրութեան մէջ լինելով, ժամանակ չունէի անձնականով զբաղվելու, բայց երբ լսեցի, թէ այս տարվայ 2-րդ համարումն էլ (յունվարի 15-ին) նոյնանման ստայօդ զրպարտութիւններ է բարդել բարեմիտ խմբագիրը իր խմբագրականում իմ դէմ, կոչելով ինձ «անփառ և անարդար» և չէ տեսնում ինձ իմ «կոչման բարձրութեան վրա կանգնած» մի վարդապետի նպաստ չը տալու պատճառով,—կարևոր համարեցի հերքել «Տարազի» թէ առաջին և թէ վերջին անձնական հաշիւներից առաջացած քննադատականը (?!)։

Ամենից առաջ յայտնում եմ, որ «քահանայացուներից փող առնելու (ուզում է ասել կաշառք), և ինձ «անարդար» կոչելու համար դիմում եմ քաղաքացիական դատի, որտեղ արդարադատութեան առաջ կանգնած խմբագիրը քաջութիւն կունենայ անշուշտ օրինական փաստերով ապացուցանելու իր մեղադրանքները, թէ ովքեր են փող առնողները և որոնցից, և թէ ինչ անարդարութիւն է տեսել իմ գործերի մէջ։ Ես միայն այսքանը կասեմ, որ ահա տարին լրանում է, ինչ որ ես առաջնորդ եմ կարգվել և վեց ամիս է իմ քաղաք մտնելս և այդքան ժամանակի ընթացքում ոչ մի քահանայացուի գործ չի ընդունվել Թեմական ատեանում։ Բացի այդ նոյն իսկ այսպիսի խառնաշփոթ և աղէտալից օրերում ես ժամանակ եմ գտել զբաղվելու քահանայական խնդրով և Թեմական ատեանին ուղղած անցեալ տարի սեպտեմբերի 27-ին թիւ 62 մի առաջարկութեամբ որոշել եմ քահանայացուների համար որոշ ցենզ, որից երևում է իմ հայեացքը այդ խնդրի կարևորութեան նկատմամբ և որի պատճէնը ուղարկում եմ խմբագրութեան։

Իսկ ինչ վերաբերում է ինձ «անփառ» կոչելուն, ոչինչ չունեմ ասելու, դա իր կարծիքը կարող է լինել և որքան կուզէ թող իմ քայլն էլ անփառութեամբ մեկնէ, եթէ ժամանակ ունի «Տարազի» բարեմիտ խմբագիրը այդպիսի մանր գործերով զբաղվելու։

Այժմ անցնում եմ իմ հերքման։ Անցեալ տարվայ 33-րդ համարի նամակի այն կէտին, թէ «բարեփոխութիւն, նորութիւն երևի չի լինի» իմ առաջնորդութեան օրով, աւելորդ եմ համարում պատասխանել. այդպիսի պահանջ միայն խելագարը կարող է անել քաղաքիս և ամբողջ թեմի այս տագնապալից դրութեան մէջ, երբ ամեն մինը զբաղված է միայն ինքնապաշտպանութեան խնդրով, բայց և այնպէս հարցնում եմ խելօք խմբագրին և իր աւելի խելօք թղթակցին, թէ արդեօք ինչպիսի բարեփոխութիւն և ինչ նորութիւն էին սպասում, համարելով թէ բազմարուեստեան կամ գեղարուեստական բարձրագոյն դպրոցներ։ Իսկ այս տարվայ 2-րդ համարի խմբագրականի այն կտորը, որ վերաբերում է «յօշոտված և լքեալ յօդուածաւտակ գրականագէտ» (?!) Ներսէս վարդապետին նպաստ չը տալու խնդրին, (միջանկեալ ասեմ, որ այդ վարդապետը աշխարհական եղած ժամանակ «Տարազի» խմբագրատանը կարծեմ սրբագրիչի պաշտօն ունենալով, զրկված բարեխիղճ խմբագրից իրան հասանելիք վարձատրութիւնից, մի առաւօտ խմբագրի տանը քնած տեղից կանուխ զարթնելով մերկ և զրկված Ներսէսը հարկադրված հագնում է խմբագրի հագուստը և ելնում դուրս) թողնելով մի կողմ, թէ ինչ չափով է չափում «Տարազի» բարեմիտ խմբագիրը գրականագիտութիւնը, անհրաժեշտ եմ համարում յայտնել, որ նպաստամատոյց յանձնաժողովը սկզբունք ունենալով միմիայն աղէտից առաջ եկած և՝ օգնութեան ոչ մի յոյս չունեցող թշուառներին օգնելու, (այդպէս էլ հրատարակված է հեռագիրներով և կոչերով) չէր կարող նպաստ տալ մի վարդապետի, որ նոյն իսկ ինքն էր եղել վանքի թալանման և բնակարանների հրդեհման պատճառ, որովհետև վանքին տրվել էր ժամանակին պաշտպանող մարդիկ, բայց վարդապետը թողնելով նրանց քաղցած, սոսկալի է հեռանալ, որոնց հեռանալուց յետոյ վանքը անմիջապէս թալանվել և բնակարանները այրվել են մօտակայքում գտնվող Թուրքերի ձեռքով։ Այս էլ ասեմ, որ ես նրան յայտնել եմ, թէ իբրև անպաշտօն վարդապետ կարող է դառնալ Էջմիածին։

Խմբագիրը անշուշտ չարամտաբար հրապարակ է հանում իմ մասին, որ իբր թէ ես եմ ստանում տասնեակ հազարներով դրամներ և իմ հայեցողութեամբ բաշխում կարօտեալներին։ Չեմ կարծում, թէ այնքան միամիտ լինի «Տարազի» բարեմիտ խմբագիրը, որ իմացած չը լինի, թէ քաղաքումս գոյութիւն ունի նպաստամատոյց յանձնաժողով տասը անձերից բաղկացած, որոնք իրանից աւելի բարեխիղճ, աւելի բարեմիտ և աւելի բանիմաց են։ Հաշիւներն էլ պահվում են ընդունված հաշուապահական ճիշտ և կանոնաւոր ձևով և նպաստները տրվում են կանոնաւոր ստուգութիւններից յետոյ նպաստամատոյց յանձնաժողովի և ոչ իմ որոշմամբ և իմ ձեռքով, իսկ մանրամասն հաշիւներն էլ, ինչպէս խոստացվել է լրագրութեան մէջ, կը հրատարակվի իր ժամանակին առանձին գրքոյկով։

Մի բան էլ կարևոր եմ համարում հարցնել «Տարազի» արդարամիտ և գիտութեան զգացմունքներով ճոխացած խմբագրին, թէ ինչու օգտվելով Վէհափառ Հայրապետի դիւանից (?!) Ներսէս վարդապետի թշուառութեան մասին տեղեկութիւն քաղելով, չէ կամեցել նաև նոյն դիւանից կրկին օգտվել հանելու նաև այն տեղեկութիւնը, որ իբր հովանաւորած Ներսէս վարդապետը իբրև անընդունակ, անգործ և վանքի գոյքերը գողանալ տուող, Վէհափառ Հայրապետի հաճութեամբ արձակվել է վանահայրութիւնից 1905 թւի օգոստոսի 24-ի 787 համար Սինոդի օրագրական վճռով։ Անշուշտ այդ բաժինն դիւանախոյզ բարի խմբագիրը Վէհափառ Հայրապետի իր առաջ բացված (?!) դիւանատան գործերի մէջ մատների միջով է նայել։ Իսկ խմբագրի այն խօսքերը, թէ այդ տեսակ պատճառներից գրգռված ձեռնպահ է մնացել իմ հեռագիրները, կոչերը և աղերսները տպագրելուց իր շաբաթաթերթի մէջ, բացարձակ սուտութիւն է, անվայել ոչ միայն մի հրապարակախօսի, այլ և ամեն մի պատուաւոր անհատի։ Դրանով երևի կամեցել է անպատուել ինձ, բայց իրականութիւնն այն է, որ ես ինքս պատիւ չեմ համարել իմ հեռագիրներս, կոչերս և աղերսներս պատճէններ տալ «Տարազին»։

Գալով դարձեալ 2-րդ համարում «Սգաւոր Ալցախ» վերնագրով Յ. Թղթակցի այն առարկութեան, թէ «լաւ կը լինէր, որ այսուհետև առաջնորդ եպիսկոպոսները բարձրագոյն կրթութեան ցենզ ունենային», դրան ես միանգամայն համաձայն եմ սկզբունքով և ոչ միայն թղթակցի նման անձնական հայեցակէտով. Ո՞ւր էր, երանի թէ այդպէս լինէր և ոչ մի դպրոցական և նոյն իսկ ճեմարանական եպիսկոպոս չը դառնար, այլ միայն համալսարանականը։ Ո՞ւր էր, թէ ապագայում կաթողիկոսներն ու պատրիարքներն էլ անշուշտ լինէին բարձրագոյն ուսման ցենզ ունեցողներ։ Ես բարձրագոյն կրթութիւն չեմ ստացել, բայց կարող եմ ասել, թէ կրթութիւնը և ուսումը ատողներից չեմ եղել և չեմ, այս մասին վստահ եմ, թէ կարող են վկայել ինձ լաւ ճանաչողները։ Այս էլ պէտք է ասել, որ առաջնորդ լինելու համար բաւական չէ ունենալ բարձրագոյն կրթութեան ցենզ, այլ ուրիշ լաւագոյն հովուական յատկութիւններ ևս։ Ամեն մի համալսարանական չէ կարող վարիչ լինել, սա մի անվիճելի ճշմարտութիւն է իւրաքանչիւր շրջահայեաց անձի համար։

Կարևոր եմ համարում նաև պարզել ընթերցողների առաջ այն, թէ ինչ է դրդել, «Տարազի» խմբագրին յարձակվել իմ վրա, թէև այդ ստայօդ զրպարտութիւնները ինձ համար մի գրօշի նշանակութիւն անգամ չունեն։ 2-րդ համարի խմբագրականի մէջ բարեմիտ խմբագիրը ինձ չէ տեսնում իմ կոչման «բարձրութեան վրա կանգնած», ինչու, ահա թէ ինչու, պարզեմ ես մի քանի խօսքով։—Որովհետև որքան յիշում եմ, մի չորս տարի առաջ, երբ «Տարազի» անընչաքաղց խմբագիրը իր կոչման բարձրութիւնից իջած, մի ստորին դեր կատարելու համար Էջմիածնում վեհարանի և սինօդականների դռների շեմքերն էր մաշում, ի թիւս որոց և իմ դրան շեմքը, մի ինչ որ ամուսնալուծութեան գործի համար, իսկ ես երեսս չը տալով զզուելի դերի մէջ մտած «Տարազի» խմբագրին, որովհետև համակարծիք չէի նրա պաշտպանած դատին, չը հրապուրվելով նոյն իսկ նրա շոյիչ խօսքերից, որ «Վեհափառ Հայրապետի մօտ իբր թէ մատնացոյց է արել Թաւրիզի առաջնորդութեան համար արժանաւոր թեկնածուներ Տ. Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեանցին և ինձ»։ Կոչմանս բարձրութեան վրա չեմ, որովհետև ամեն տարի «Տարազի» խմբագրի ինձ ուղարկած շնորհաւորական տոմսերը թողել եմ միշտ անպատասխան։ Կոչմանս բարձրութեան վրա չեմ, որովհետև անցեալ տարվան կարծեմ ապրիլ ամսի սկզբներին մի նամակով շնորհաւորելով ինձ առաջնորդ կարգվելս, «Տարազի» քաղաքագէտ և անշահախնդիր խմբագիրը խնդրում էր ինձ Շուշում «Տարազի» տարածման և ինչ որ նկարների վաճառման գործին աջակցելու, իսկ ես պատասխանեցի իրան, թէ «օգնական լինել չեմ կարող»։ Կոչմանս բարձրութեան վրա չեմ, որովհետև անցեալ տարվայ յունիսի կէսերին իր նամակով ինձ տուած յանձնարարութեան խրատին և խորհրդին ուշադրութիւն չեմ դարձրել և նոյն իսկ նոյն նամակում ինձանից խնդրած պատասխանը հեռագրով չեմ տուել. այդ նամակը թերևս կազմված պէտք է լինի իր պատուական բարեկամ և եռանդուն գործունեայ ազգայինի բնակարանում։ Կոչմանս բարձրութեան վրա չեմ, որովհետև արձակել եմ թեմական ատեանից անպէտքներ և ծառայողներ, որոնցից մէկի հօրեղբօրորդին է թղթակից, միւսի քրոջ որդին և միւսն էլ հէնց ինքը։ Կոչմանս բարձրութեան վրա չեմ, որովհետև յետ չեմ քաշվել և չեմ տատանվել պատժելու մի քահանայ իր յանցնութեան, անկարգապահութեան և խռովարարութեան համար, որի աներոջ որդին և սրա ազգականն են թղթակից և որոնք կարող են ամեն րոպէ նիւթերի պակասութիւն զգացող «Տարազին» մարգարտաշահման տողեր նուիրել։

Ի միջի այլոց վերջին թղթակցութեան մէջ Յ. Թղթակիցը առաջ է բերում վանքերի աննախանձելի դրութիւնը, իբրև հետևանք անհոգութեան, այնպիսի մի ժամանակ, երբ ամեն մի քարի և թփի ետև թաքնված մարդիկ գնդակահարում են անց ու դարձ անողին, երբ Ամարասը թալանված, բնակարանները հրդեհված, և թշնամիներով շրջապատված՝ հնարաւորութիւն չը կայ վանահայր պահելու այն տեղ, իսկ գալով այնտեղի մասունքներին, թող լաւ իմանայ «Տարազի» նախանձախնդիր ցեղասէր թղթակիցը, որ վաղուց արդէն գտնվում են քաղաքում, և վանքի հարստութիւնն էլ յանձնված է երեք վերստ հեռաւորութեան վրա գտնվող Սոս գիւղի քահանային։

Ահա թէ ինչ պատճառներ ունեն «Տարազի» յետին մտքերով վարկված բարեխիղճ խմբագրի անտեղի և անհիմն յարձակումները, որ ժայթքելով լուտանքների հրաբուխը լուտանք է շպրտում դէպի ինձ, բայց ինձ համար, ինչպէս ասի, մի գրօշի արժէք անգամ չունեն «Տարազի» այստեղ այնտեղ դարբնված թղթակցութիւնները, որոնցից մեծագոյն մասն էլ դարբնվում է հէնց նոյն իսկ խմբագրատան մէջ, որի համար ունեմ ձեռքիս փաստ։

Թէև յարմար կը լինէր իմ այս պատասխանը տպել տալ այն թերթում, որ պատուել է ինձ իր անլուր զրպարտութիւններով, բայց այդ ես չարի, որովհետև վստահութիւն չունէի «Տարազի» խմբագրի ազնուութեան վրա որ անփոփոխ և իր ժամանակին կը տպէր հերքումս։ Կարծեմ, թոյլ կը տան ինձ ընթերցողները կասկածել այն խմբագրի ազնուութեան վրա, որը անազնուաբար յայտարարում է 2-րդ համարի խմբագրականի մէջ, որ ինքը ձեռնպահ է մնացել և չէ հրատարակել իմ իրան չուղղած հեռագիրներն ու կոչերը։

Աշոտ եպիսկոպոս

---

[1] Մենք տեղ տալով այս նամակին, ամբողջ պատասխանատուութիւնը թողնում ենք հեղինակին։ Ս. Խ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փոխարքայի դիւանատունը ամսիս 23-ից սկսել է ուղարկել նահանգապետներին և շրջանային կառավարիչներին Պետական Դումայի ընտրութիւնների վերաբերեալ բոլոր օրէնսդրութիւնները, հաւաքածուի պէս տպագրված։

—

Փոխարքայի դիւանատունը առաջարկել է քաղաքային հասարակական վարչութեանը, առանց սպասելու առանձին ցուցմունքների, հէնց այժմից սկսել Պետական Դումայի համար ընտրութիւններ կատարելու նախապատրաստական պարապմունքները։

—

Թիֆլիսի քաղաքային գործերի նահանգական ատեանը փետրվարի 22-ի իր նիստում վճռել է փոխել Թիֆլիսի քաղաքային դումայի այն որոշումը, որով 5000 րուբլի յատկացվում էր Գուրիայի վնասվածներին, Նախիջևանի հայ-Թուրքական ընդհարումների արկածեալներին, բայց ոչ Երևանի նահանգական մասնաժողովի միջոցով, 5000 րուբլի և Ռուսաստանի ջարդերում վնասված հրէաների օգտին 2000 րուբլի։

—

Թիֆլիսի նահանգական իշխանութիւնը ներկայումս զբաղված է Թիֆլիսի նահանգում նոր գաւառ հիմնելու հարցը մշակելով։

—

Փետրվարի 22-ին, 3-րդ իգական գիմնազիայում կայացաւ ծնողական կրուժոկի խորհուրդի նիստը գիմնազիայի տեսուչ պ. Բօգոյաւլէնսկու մասնակցութեամբ։ Ի միջի այլոց վճռվեց տեղական լեզուների դասաւանդութիւնը գիմնազիայում պարտադիր առարկայ դարձնել, թէկուզ դրա համար նոյն իսկ հարկադրված լինեն կրճատել կամ բոլորովին վերացնել մի քանի ուրիշ առարկաներ, ինչպէս օր. յունարէնը, լատիներէնը և այլն։

—

Քաղաքային վարչութեան ստատիստիքական բիւրօն արդէն սկսել է կազմել քաղաքային վարչութեան այն ծառայողների ցուցակը, որոնք Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունին։ Այդպիսի ընտրողների թիւը մօտաւորապէս հաշւելով 300 հոգուց աւելի է։ Ցուցակի մէջ չեն մտցրված 25 տարեկանից պակաս հասակ ունեցող կանայք և բանւորները։

—

Փետրվարի 23-ին, առաւօտեան ժամի 7-ին, 1 և 3-րդ հրացանաձիգ բատալիոնի ու ելիսավէտպօլսկի գնդի մի վաշտի զինուորները և սպաները խուզարկութիւն կատարեցին Նախալօվկայի բոլոր բնակարաններում և խանութներում։

—

Վրաստանի էկզարխի և Կովկասեան անասնաբուժական մասի կառավարչի դիւանատուները անցեալ օրը ուղարկել են քաղաքային վարչութեանը յիշեալ հաստատութիւնների մէջ այն ծառայողների ցուցակը, որոնք իրաւունք ունեն մասնակցելու Պետական Դումայի ընտրութիւններին։

—

Մարտի 15-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում նշանակված է «Գրանդ Օտել» հիւրանոցում գտնված ռումբերի գործի քննութիւնը։ Այդ գործի համար դատի են ենթարկված Կ. Քօչարօվ, Շ. Պավլիչվիլի, Ա. Ցկիպուրիշվիլի, Պ. Բասարիշվ, Վ. Խուդադով և Դ. Կաչաւրի։

—

Թիֆլիսաբնակ Ջալիլ-Մամէդ ղուլի-զադէյին Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է հրատարակել Թիֆլիսում Թուրքերէն լեզուով մի նոր երգիծաբանական շաբաթաթերթ «Մօլլա Նասր-Էդդին» (մուսուլման գրականութեան մէջ յայտնի առասպելական խեղկատակի) անունով։

—

«Իվէրիա» վրաց թերթի նախկին աշխատակից Վլադիմիր Դարչիաշվին իրաւունք է տրված հրատարակելու Թիֆլիսում վրացերէն լեզուով ամենօրեայ մի թերթ «Սիմարթլէ» «Ճշմարտութիւն» վերնագրով։

—

Այսօր, շաբաթ, երեկոյեան 8 ժամին, Թիֆլիսի Հրապարակական Գրադարանի շինութեան մէջ կը կայանայ Մոսկվայի կայսերական Հնագիտական ընկերութեան կովկասեան բաժանմունքի նիստը։

—

Գանձակից գրում են, թէ խաղաղասէր և հաշտարար կուսակցութիւնները երկու կողմից էլ ուժեղանում են և շարունակում են իրանց գործունէութիւնը։ Մի քանի հայ գիւղերում, սով է սկսվել։

—

Թոյլատրված է միջնակարգ դպրոցների աշակերտների պահեցողութիւնը յետաձգել Մեծ պասի վերջին շաբաթը և դպրոցական պարապմունքների տևողութիւնը երկարացնել, որպէս զի կարելի լինի լրացնել դասընթացը, որ յետ է մնացել շնորհիւ խառնակութիւնների և գործադուլների։

—

Փետրվարի 22-ին, երեքշաբթի օրը, երեկոյեան 7 ժամին, դարձեալ մի տարօրինակ սպանութեան դէպք է պատահել քաղաքումս. մի դեռ ևս անյայտ մարդ մտնում է քաղաքիս 8-րդ մասում բնակվող Ջինջերի կարեմեքեանայի գործակալ Մեհրաբ անունով հայի տունը և յանձնում է նրա անունով մէկ ծրար, խնդրելով կարդալ և պատասխանել։ Մինչև նա կը շուռ գար կարդալու, անյայտ չարագործը պարպում է նրա վրա ատրճանակ և գետին գլորում։ Մեհրաբը, որ մօտ 50 տարեկան մարդ է, ծանր վէրք է ստանում և նոյն գիշերը Միքայէլեան հիւանդանոցում վախճանվում է։ Թէ չարագործը ինչ շարժառիթներից է այդ ոճրագործութիւնը կատարել դեռ ևս պարզված չէ. ինքն էլ անյայտացել է, սակայն կայ մի վերսիա, որ իբր այստեղ Մեհրաբը զոհ է գնացել անձնական վրէժխնդրութեան։ Այսպէս թէ այնպէս մեր քաղաքում այնպիսի անսովոր, տարեգրութեան մէջը չը լսված ոճիրներ են կատարվում, խաղեր են խաղում մարդու կեանքի հետ—որ տխուր իրականութեան վրա այլ ևս սովորական աչքով նայելը անհնարին է և գործին պիտի եռանդուն կերպով միջամտեն մեր առաջաւոր մարդիկ, եթէ կամենում են պակաս զոհերի թիւը նուազեցնել։

—

Փետրվարի 25-ին, չորեքշաբթի ցերեկով իշխ. Վօրոնցօվի արձանի մօտ գտնվող Ալիխանովի կօնդիտերի խանութի, ծխնելոյզում կրակ ընկաւ և խիստ քամի օր լինելով՝ սպառնում էր մեծ հրդեհ առաջացնելու. հրդեհաշէջների ժամանակին ձեռք առած միջոցների շնորհիւ կրակը հանգցրին և մի ամբողջ խանութների շարք ազատեցին կորստից։

—

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան Թիֆլիսի այգեգործական ուսումնարանի մասին, 1905 թւի հաշւէտւութիւնից առաջ ենք բերում հետևեալ տեղեկութիւնները. ուսումնարանն ունէր 7 ուսուցիչ, 52 աշակերտ, որոնցից ուղղափառ վրացիներ 19 և ռուսներ 5, հայ-լուսաւորչական՝ 23, մուսուլմաններ 4 և 1 լեհ։ Ուսումնարանը պահելու համար ծախսված է առհասարակ 17,084 րուբլի, որոնցից ուսումնարանի պահպանման և դասական պիտոյքների համար պետական գանձարանից ստացվել է 2,968 րուբլի, կայսերական կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնից՝ 2,045 րուբլի, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնից 300 րուբլի։ Այգիներից ստացվում է եկամուտ 1,974 րուբլի, իսկ մնացեալ 9,555 րուբլին աշակերտական թօշակներից և պատահական մուտքերից է գոյանում։

—

Մոսկվայի պետական խնայողական դրամարկղներում բացված են կեանքի, կենսաթոշակի և օժիտի ապահովագրական ճիւղեր։

—

«Нов. Вр.» հաղորդում է. Մոսկվայի քաղաքային դումայի 1904 թւի նոյեմբերի 30-ի որոշումը՝ պետական կազմը փոփոխութեան ենթարկելու առիթով, ժողովրդական ներկայացուցչութեան սկզբունքի վրա դնելու համար, որը մեծ դեր խաղաց մեր սահմանադրականութեան պատմութեան մէջ, իր ժամանակին նահանգապետի կողմից բողոքվեց, իսկ քաղաքային ու զեմսկի գործերի նահանգական ատեանը դումայի այդ որոշումը—բեկանեց։ Դուման այդ վճռի դէմ բողոք ուղարկեց կառավարչական Սենատին։ Վերջինս արդէն նահանգական, քաղաքային և զեմսկի գործերի ատեանի այդ վճիռը լուծել է։

—

«Веч. Газ.» թերթին հաղորդում են Օմսկից, որ Վլադիվօստոկից յուզիչ լուրեր են ստացվել, ապստամբութիւնը նորից է գլուխ բարձրացրել։ Ռազմական դիրքերը գրաւել են ապստամբները։ Շտապով գնում է այնտեղ գեներալ Միշչենկօն։

—

«Рус. Сл.» հաղորդում է, որ բարձր շրջաններում այն եզրակացութեանն են եկել, որ սահմանադրական-ռամկավարական կուսակցութիւնն էլ պէտք է համարել միւս արգելված կուսակցութիւնների թւում։ Բայց չը նայելով դրան՝ յիշեալ կուսակցութիւնը վճռել է ինչ որ էլ լինի եռանդուն կերպով մասնակցել ընտրութիւններին։

—

Ստացանք Վ. Վ. Վօդովօզովի «Ընդհանուր ընտրողական իրաւունքը Արևմուտքում» գրքոյկի թարգմանութիւնը, կատարված՝ Կ. Միքայէլեանի ձեռքով։

—

Որովհետև քաղաքային դուման Թիֆլիսում հասցէների գրասենեակը վերաբանալու հակառակ կարծիք յայտնեց, ուստի վերջինս հիմնվում է Կովկասեան փոխարքայութեան օրէնքների 17 յօդ. հիման վրա։ «Կ.»

—

Թիֆլիս են եկել Դաղստանի շրջանից 60 դաղստանցիներ, որոնք գործունեայ մասնակցութիւն են ունեցել ռուս-ճապոնական պատերազմում իբրև կամաւորներ։ Նրանք եկել են Թիֆլիս Փոխարքայի հրաւէրով։

—

Օդեսայի բանտում քաղաքական կալանաւորների թւում գտնվում են ժանդարմների դիվիզիոնի 2 զինւոր, որոնք մեղադրվում են ժանդարմների մէջ թռուցիկներ տարածելու համար։ Ժանդարմները իրանց պաշտօնազգեստով են և զարմանք են պատճառում «Նորեկներին»։ «Веч. Газ.»

—

Շատ քաղաքներում Պետերբուրգից հեռագրական կարգադրութիւն է ստացված առայժմ յետաձգել կալանաւորներին աքսորելը։ «Н. Ж.»

—

Լուր է պտտում, որ ժանդարմների զօրամասը գաղտնի հրահանգ է ստացել, որով նրանց չափազանց մեծ լիազօրութիւններ է տրվում: Համաձայն այդ հրահանգների անկարգութիւնների ու յուզմունքների ժամանակ դրանք լիակատար իրաւունք են ստանում ազատ գործողութիւնների դիմելու, մինչդեռ ժամանակ յայտնված է, որ նրանց իրաւունքից դուրս, ապօրինութիւնների համար տրված գանգատները անհետևանք են թողնվելու: «Вѣкъ»

Տէմիրեազէվի հրաժարականը ընդունված է: Ինչպէս նա, նոյնպէս և Կուտլէրը գնացին Ցարսկոյէ-Սէլօ և անձամբ խնդրեցին Թագաւորին չը նշանակել իրանց Պետական Խորհուրդի անդամ, որովհետև ներկայ ռէպրէսիաների ժամանակ խիղճը թոյլ չէ տալիս նրանց մնալ պետական ծառայութեան մէջ: «Рус. Вѣд.»

Առաջիկայ մարտի սկզբներին, մեր գերիներին պահելու համար, Յապօնիային վճարելիք վարձատրութիւնը մեծ անհանգստութիւն է պատճառում ֆինանսական մինիստրութեանը, որովհետև պետական գանձարանը չունի մի այդպիսի խոշոր գումար ներկայումս: Պորտսմուտի դաշնագրով որոշված վարձատրութեան քանակը հասնում է 150—200 միլիօն րուբլու. այժմ փոխադրութեան գործի 1 $^{1}/_{2}$ ամիս ուշացնելու պատճառով աւելանում է այդ գումարը: Այդ դրութիւնը ստիպում է ֆինանսների մինիստրութեանը արտակարգ միջոցների դիմել փող գտնելու համար: «Русь»

Պետերբուրգի ցենզուրական կոմիտէտը գանգատվել է Պետերբուրգի քաղաքապետին, որ լրագիրների փողոցային ցրուիչները յաճախ վաճառում են կառավարութեան կողմից օրաթերթերի ու շաբաթաթերթերի գրաւած համարները: Երբ նրանց հարցնում են, թէ որտեղից էք ձեռք բերում այդ համարները, նրանք խոստովանվում են, որ առնում են ոստիկանական մասերում: Քաղաքապետը կարգադրել է, որ այդ բանում յանցաւոր պաշտօնեաները խիստ կերպով պատժվեն, իսկ գրաւված համարները իսկոյն եթէ ուղարկվեն քաղաքապետի դիւանատունը: «В.»

«Русь» թերթի ասելով ռուսական րուբլու արժէքը շարունակում է ընկնել: 100 րուբլու համար տալիս են 98 րուբլի, 500 րուբլու համար՝ 491 րուբլի 10 կոպ., Պարիզեան 100 րուբլի փոխադրութիւնը Ռուսաստանի համար արժէնում է 262 ֆրանկ 266 $^{2}/_{4}$ դէմ:

Փետրվարի 12-ին. ցուցմունքներով վերջնականապէս հաստատվում են Շմիդտի խօսքերը Պերեկոպի հասարակապետութեան մասին: Ռմբաձիգ սպաները վկայում են, որ «Օչակօվ» զինուորական նաւը կարող էր միայն կրակել առջևի ու յետևի մասի թնդանօթներից, մինչդեռ նրա վրա կենտրոնացված էր ամբողջ նաւատորմի և ցամաքային թնդանօթների ու գնդակաձիգների կրակը: Կապիտան Իվանովսկին ասում է, որ հրաման ստացաւ մարտկոցների համազարկով ոչնչացնել «Օչակօվը», բայց չարեց, պատասխանատւութիւնը իր վրա առնելով, և երբ նկատեց որ նա արդէն այրվում է, իսկոյն դադարեցրեց կրակելը: Դատի պաշտպանողները չեղչեցին այդ հրամանը, մատնացոյց անելով, որ «Օչակովի» վրա կային 70 գերի սպաներ: Յետոյ կանչվում են մեղադրութեան գլխաւոր վկաները բժիշկներ Ֆեդոտով և Ավրորով: Ավրորովը հաստատում է, որ ինքը հրաժարվել է օգնութիւն հասցնել վիրաւոր Շմիդտին: Միչման Վախտէնը ասում է, որ Շմիդտը եկաւ «Պրուտ» զինուորական նաւը և յայտնեց սպաներին. «ես արդէն եկել եմ մեռնելու կամ ազատելու պոտեմկինցիներին»: Սպաները զիջեցին: Մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ, վկայ Վախտէնը լրացնում է իր ցուցմունքը հետևեալ խօսքերով. «Թնդանօթաձգութեան ժամանակ Շմիդտը թաքնվեց բարձի մասում»: Շմիդտը զայրացած ու գունատ գոչում է. «ինձ մեղադրում են վախկոտութեան մէջ, մինչդեռ ես ամբողջ օրը վտանգի մէջ եմ եղել, անցնելով նաւատորմի մօտից ընդամէնը ատրճանակի գնդակի տարածութեան վրա: Ամօթ է ցեխ նետել մի մարդու վրա, որ արդէն գերեզմանի ափին է գտնվում»: Սկսվում են խիստ ցնցումները և Շմիդտը լալով ընկնում է թուլացած: Դատավարութիւնը ընդատվում է: Պաշտպան Վրուբլէվսկին խնդրում է հրաւիրել ջղային հիւանդութիւնների մասնագէտ բժշկի՝ միմիայն օգնութիւն ցոյց տալու համար: Դատարանը մերժում է: Այնուհետև Շմիդտը կազդուրվելով արտասանում է ոգևորված մի ճառ, գեղեցիկ ու ազդեցիկ ճառ, որը խոր տպաւորութիւն է թողնում և յուզում դատաւորներին: Արտասվում են պաշտպանները և մեղադրվողները: «Ես պատրաստ եմ, արտասանում է նա, մեռնելու իմ քաղաքական համոզմունքների համար, իմ գործի համար, որի պատճառով կռուել եմ և կռուում եմ իմ ամբողջ կեանքում: Ես պատրաստ եմ մեռնելու ռուսաց ժողովրդի և իր Թագաւորի համար, բայց ոչ այն պատճառով ինչ որ փաթաթում են իմ շլինքին»: Սաստիկ տպաւորութիւն է թողնում ճառը, որից յետոյ տիրում է խորին լռութիւն: Այնուամենայնիւ դատարանը նրան մահվան պատժի է դատապարտում, կախաղանի միջոցով:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փետրվարի 22-ին, գիշերվայ ժամի 2-ին, 4 զինված անյայտ չարագործներ մտել են Սերգէյ Ալիխանեանի գրասենեակը և նրանից պահանջել են փող: Ալիխանեանը տուել է իր մօտ եղած 100 րուբլին: Ալիխանեանի փոքր եղբայրն էլ գրասենեակումն է եղել. Նա էլ տուել է իր ունեցած 7 րուբլին. բայց չարագործները դրանով չեն բաւականացել և պահանջել են 2 Ալիխանեաններից էլ ժամացոյցները. Նրանք կատարել են չարագործների պահանջը: Չարագործները գրասենեակից դուրս են եկել, նստել են ֆաէտօն և գնացել: Ճանապարհին զինուորները կանգնեցնում են և խուզարկում. տեսնում են, որ չարագործներից իւրաքանչիւրը ունի ատրճանակ, սուր և քինջալ: Նրանց տարել են ոստիկանատուն: Ժամացոյցները վերադարձրել են Ալիխանեաններին: Ինչպէս պարզվեց, չարագործներից մէկը թուրք է եղել, երկուսը ռուս, իսկ չորրորդը իմերել:

Փետրվարի 20-ին Մանթաշեանի, Պեսկովսկի փողոցի վրա եղած խանութի կառավարիչը Սերգէյ Սարեանը այսպէս յայտնեց ոստիկանութեանը, որ նախընթաց գիշերը, նմանեցրած բանալիի օգնութեամբ բաց են արել խանութը և գողացել են 8000 րուբլու մետաքսէ և ուրիշ ապրանքներ:

Փետրվարի լոյս 20-ի գիշերը Գրիգոր Մալայեվի կանցլարասեքի խանութի դուռը կոտրելով անյայտ չարագործները գողացել են 38 հայելի և 500 րուբլու գանազան կանցլարասեք: Քննութիւն է կատարվում:

Փետրվարի լոյս 20-ի գիշերը չարագործները փորձ են արել, կողոպտել Զաքար Դաւիդովի խանութը, բայց ոստիկանութիւնը ձերբակալել է գողերին յանցանքի տեղը. չարագործներն են Իվան Մարդունենկօն և Նադիբաշվիլին, որոնք բանտարկված են:

Բժիշկ Կոնստանդին Ֆօն-Իրտելը յայտնեց 9-րդ քաղաքամասի ոստիկանութեանը, որ փետրվարի 21-ին, երեկոյեան, նրա բնակարանից (Ելիսավէտինսկայա փողոց № 17) նրա և նրա ազգականու բացակայութեան ժամանակ անյայտ չարագործներ նմանեցրած բանալիով բաց են արել դուռը և ներս են մտել բնակարան կոտրելով գրասեղանի արկղը, գողացել են դրական բանկի 8 տոմսակ 9000 րուբլի արժողութեամբ 80 րուբլի կանխիկ դրամ, 1-ին փոխառութեան առաջին խաղատոմսակ անդորրագիրը և խնայողական գանձարանի 900 րուբլու հաշվէգիրքը: Ազնուական բանկի 8 տոմսակները չարագործները վայր են գցել Ելիզավէտինսկայա փողոցի, վրա, որոնք գտել է մի լուացարար կին, Ավդոտիա անունով, և յանձնել է տիրոջը Ֆօն-Իրտելին: Գողացած իրերը և գողերը գտնելու համար միջոցներ են ձեռք առնված:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրքիա.—Սուլթանի կառավարութիւնը նկատի ունենալով Ֆէյզի փաշայի կրիտիկական դրութիւնը Եէմէնում, որտեղ նա պաշարված է արաբ ապստամբների կողմից, վճռել է ուղարկել 14,000 հոգուց բաղկացած մի նոր օրդու բանակ:

—Բելգիան իր բազմաթիւ պահանջների ապարդիւն լինելը տեսնելով, մի վերջին ծանուցագրով առաջարկել է Բ. Դրան Փօրխի հարցը յանձնել Հաագայի իրաւարար դատարանին, որոշելու համար, թէ Բելգիան, իր դաշնագրի հիման վրա իրաւունք ունի՞ թէ ոչ պահանջելու Փօրխին, դատելու համար նրան բելգիական դատարանների առաջ:

—Ռուսաստանը դարձեալ պահանջել է Թիւրքիայից 1904—1905 թիւ պատերազմական յետամնաց տուրքը:

—Թուրք-պարսկական վէճը դեռ ևս կարգադրված չէ և եթէ այսպէս շարունակվի կարգադրվելու յոյս էլ չը կայ: Հակառակ մինիստրների խորհրդի ստորագրած մազբաթային, տեղեկագրին, զինուորական կուսակցութիւնը հակառակվում է վէճի առարկայ եղող հողից Թուրք զինուորների հեռանալուն և կայսերական իրադէն տակաւին չէ լոյս տեսնում: Ընդհակառակը թիւրքական կոմիսիան հասել է վէճի առիթ տուող տեղը և իսկոյն թիւրք նոր ոյժեր են կենտրոնացել նոյն շրջաններում: Իսկ պարսից կառավարութիւնը հրաժարվում է իր կողմից կոմիսիա ուղարկելու մինչև որ թիւրք զօրքերը նոյն տեղից կը հեռանան:

—Այդ առաջին վէճը չէ: Թիւրքիան ունի և մի թիւրք-եգիպտական վէճ, որի մասին բաւական խօսեցին հեռագիրները: Կարմիր Ծովի ափում գտնվող Ակաբա քաղաքից տասներկու կիլոմետր հեռու, Հեջազի ուղղութեամբ, քաղաք, որ պատկանում է Թիւրքիային և որը գտնվում է թիւրք-եգիպտական սահմանագլխային գծի վրա, թիւրքերը հաստատել են զինուորական մի պահակատուն: Արդ, այդ պահակատունը հաստատվել է եգիպտական հողի վրա և թիւրքերը չեն ուզում հեռանալ հակառակ եգիպտական և անգլիական կառավարութիւնների բողոքների: Անգլիական դեսպանը Կ. Պօլսում, պահանջել է Բ. Դռնից, որ սահմանագլուխները որոշող մի գիծ հաստատվի, որը ջնջէ բոլոր թիւրիմացութիւնները և օրինակ վերացնէ անկասկած եգիպտական հողի վրա հաստատված պահակատունը: Բայց Բ. Դուռը մերժում է: Դրանից՝ Անգլիայի սպառնալիքները:

Մահդիզմը Աֆրիկայում» այդ վերնագրով տպագրված է «Вѣкъ»-ի մէջ Ա. Գրինի հետևեալ յօդուածը:

Անգլիական, գերմանական ֆրանսիական թերթերը, գրում է հեղինակը, հաղորդում են, որ Չադ լճի մօտ, Սոկօթօյում, յայտնվել է մի նոր մահդի, որը արդէն յաջողութիւն է ունեցել մի քանի յաղթութիւններ տանել անգլիացիների և ֆրանսիացիների դէմ: Աֆրիկայի մուսուլմանների այդ նոր կրօնապետին շրջապատել է համախոհների մի մոլեռանդ ամբոխ: Մահդիզմը մուսուլման աշխարհում մի շատ կարևոր և արտակարգ երևոյթ է: Նա անմիջապէս արձագանք է գտնում սիւննի Արևելքի բոլոր մասերում և յաճախ մեծ բարդութիւններ է սպառնում:

Երբ մուսուլմանները ընդհարվեցին Հնդկաստանի հետ ամբողջ Արևելքը հեղեղվեց բուդդայական իդէալով, նրանք մուտք գործեցին և մուսուլմանական փիլիսոփայութեան մէջ ու այստեղ էլ ստեղծեցին այն հաւատը, որ իբրև թէ Ալլահը մարմնանում է իր ընտրեալներից մէկի մէջ:

Այդպէս էին Մուհամմէդը, Ալին և նրա անմիջական սերունդը: Այդ հաւատը պառակտում ձգեց շիաների և սիւննիների մէջ, որոնցից առաջինները ընդունեցին բուդդայական դաւանանքը: Նա թագաւորում էր սիւննի Եգիպտոսում, և այնտեղ Խաքիմ խալիֆը իրան մահդի անուանեց, կամ Աստուծոյ մարմնացումը:

Եւ եգիպտական այդ խալիֆից սկսած, որը, գուցէ, նոյն իսկ խելակորոյս է եղել, ամբողջ Աֆրիկայում թագաւորում է, այն իդէան, որ իբր թէ մահդին կենդանի է, և մարմնացել է որ և է մի հռչակաւոր մուսուլման պարագլխի մէջ: Մահդիի մասին երազում են և Ասիայում, և մահդիզմի իդէան հասնում է նոյն իսկ մինչև մեր Կովկասին և Թուրքեստանին: Երբ նախկին մահդին իշխում էր Աֆրիկայում, անգլիացիները ամեն ճիգ գործ դրին խորտակել նրան Օմդուրմանի մօտ: Նշանաւոր Կիչեները աջողութիւն ունեցաւ, բայց անկարող գտնվեց ոչնչացնել բուն իդէան, և նա այժմ դարձեալ վերածնվեց Սուդանի կենտրոնում, Տոմբուկտուից ոչ հեռու, մի ինչ որ ճգնաւորի ուղեղում:

Անկասկած, նոր մահդիի յայտնվելը բարդութիւններ կառաջացնի ամբողջ մուսուլման Արևելքում: Նա կը ազդէ նոյնպէս Անգլիայի ու Եգիպտոսի Ակաբայի մէջ ունեցած վէճի և Մարոքքօյի կոնֆերենցիայի վրա, և, անշուշտ, կովկասեան մուսուլմանութեան մէջ նոյնպէս, որը, ինչպէս ցոյց են տալիս կովկասեան վերջին դէպքերը, յայտնի չափով պանիսլամիզմի իդէաներով է ներշնչված:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 փետրվարի

ՓԱՐԻԶ, 22 փետրվարի: (Հաւաս): Գոյքերի ցուցակագրելու հարցը պալատում քննելուց յետոյ առաջարկվեց դրա ձևակերպութիւնը, բայց մերժվեց ձայների մեծամասնութեամբ 267-ով 234-ի դէմ: Ռուվիէն յայտնեց, որ կառավարութիւնը հրաժարվում է այլ ևս մասնակցել յետագայ վիճաբանութիւններին, և ինքը դուրս եկաւ դահլիճից միւս մինիստրների հետ կաբինէտի ընկնելը անխուսափելի են համարում: Մինիստր-նախագահի պաշտօնի թեկնածուների թւում դնում են և Միլերանին:

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 22 փետրվարի: Համաձայն սենատում ընդհանուր ընտրողական իրաւունքի քուէարկութեան, վերջինս վերապահված է 24 տարեկան տղամարդկանց և կանանց, բայց զրկվում են այդ իրաւունքից հասարակութեան խնամատարները, հարկեր չը վճարողները և անկարող պարտապանները:

ՎԻԵՆՆԱ, 22 փետրվ.: Աւստրօ-Ունգարիայի վերջին առաջարկութիւնը կայանում էր նրանում, որ Զէմլինում բէլգրադական մաքսատան մէջ կուտված աւստրիական ապրանքները Սերբիա թողնվեն հին տարիֆով և այդ ապրանքների փոխարէն ներմուծվի միս, թռչուններ և անասուններ: Սերբիայից պահանջվող հին տարիֆով 12 միլիօն կրօն գումարի զիջումով չէ վերջանալու գործը, նամանաւանդ այն պատճառով, որ անասնաբուժական կոնվէնցիայի մերժումը զրկում է Սերբիային երաշխաւորութեան յոյսից, թէ Աւստրօ-Ունգարիան մի դուզէ չանէ որ և է զիջում:

ՓԱՐԻԶ, 23 փետրվ.: (Հաւաս): Ռուվիէն յայտնեց Ֆալիէրին կաբինէտի հրաժարվելու վճռի մասին: Ֆալիէրը ընդունեց հրաժարականը և խնդրեց շարունակել իր պարտականութիւնները և վճռել հերթական գործերը: Պատգամաւորների պալատում ծովային մինիստրն ասաց, որ զինուորական բարձր խորհուրդը մշակել է նաւատորմը ուժեղացնելու մի ծրագիր: Այս ծրագրի համաձայն մտադրվում է զինաւորել մի քանի ուժեղ զրահանաւեր և 6 զրահապատ ծովաշրջիկներ 18,000 տոն արագութեամբ և 18 հանգոյցի:

ՌԻԳԱ, 23 փետրվ.: Արտասահման մեկնող նաւում բռնված են 3 անցաթուղթ չունեցողներ, որոնցից մէկը երկաթուղային ծառայողների նահանգապետին յաճախ ներկայացող պատգամաւորութեան պատուիրակներից է. երևաց որ նա պատկանելիս է եղել սօցիալ-յեղափոխականների ռազմիկ կազմին, մասնակցել է Ֆալլէրի գործարանի կողոպտումին և քաղաքական նպատակով մի բանւորի սպանման: Նրա մօտ վերարկուի մէջ կարած գտնվեց գողացված փողերից 110 րուբլի: Միւս երկուսի անձնաւորութիւնը դեռ չեն պարզված: Մէկի մօտ միայն գտնված է չորի մէջ 90 րուբլի:

ԿԻԱԽՏԱ, 23 փետրվ.: Փետրվարի 21-ին ձերբակալված են արդիւնաբերական միութեան 16 անդամները, որոնց թւում և վաճառականների աւագների բանկի վերատեսուչ Սերտիւկովը և քաղաքային վարչութեան անդամ Նէմչինովը:

ՍՕՖԻԱ, 23 փետր.: Մակեդոնական յեղափոխական կուսակցութեան գլխաւորներից ստացած տեղեկութիւններից երևում է, որ երևի այս գարունը խաղաղ կանցնի: Չի լինի զինված գործողութիւն թուրքաց իշխանութիւնների դէմ: Կազմակերպութեան թուլութեան պատճառը կայանում է նիւթական բացակայութեան մէջ, որ հետևանք է նուիրատուութիւնների կրճատման և առաջնորդների գժտութեան:

24 փետրվարի

ՎԻԵՆՆԱ, 23 փետրվարի: (Բիւրօյի Թղթ.) Պաշտօնական լրագրում տպված են այն կանոնները, որոնք վերաբերում են բուլղարական ապրանքների տարիֆին, իսկ Սերբիայի ապրանքների համար նշանակված է մաքսային ընդհանուր տարիֆ, որ կը գործադրվի մարտի 1-ին:

ԽԱԲԱՐՕՎՍԿ, 23 փետրվարի: Կազմվեց հոկտ. 17-ի դաշնակցութեան մասնաճիւղ: Պաշտօնական օրգանն է «Пріамурье» լրագիրը:

ԼՕՆԴՕՆ, 23 փետրվարի: «Դէյլի Տէլէգրաֆին» անգլիացիներին Պորտ-Արտուր և Հեռաւոր Արևելք մտնելու թոյլ չը տալու առիթով հեռագրում են Տօկիօյից, որ բրիտանական կառավարութիւնը պարտաւոր է լուրջ առաջարկութիւն անել՝ իր հպատակների իրաւունքների այդպիսի խախտման դէմ:

ԿԵՕԼՆ 23 փետրվարի: «Կէօլնի-Ցէյտունգ» լրագրի լուրերի համաձայն անհաւանական է թւում թէ Հաագայի երկրորդ կոնֆերենցիան կը կայանայ այս ամառվայ ընթացքում: Երբ Ռուզվէլտը կոնֆերենցիայի գումարման նախաձեռնութիւնը առաջարկեց Ռուսաստանին, աչքի առաջ ունէր գումարել կոնֆերենցիան 1906 թ. օգոստոս ամսին, բայց մինչև այժմ այդ հարցի առիթով բանակցութիւններ չեն եղել մեծ պետութիւնների միջև:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 փետրվարի: Բերլինի բանկիր Մէնդէլսօնի գալուստը կապ չունի—ինչպէս սխալմամբ հաղորդում են լրագիրները, արտաքին փոխառութիւն կապելու հարցի հետ: Մենդէլսօնը չէ հրաւիրված և եկել է անձնական որոշումով կարգադրելու ֆինանսների մինիստրութեան հետ—որի բանկիրի պաշտօնն է վարում, մի քանի հաշիւներ, գլխաւորապէս պարտականութիւնների կարճ ժամանակամիջոցի հարցը: Քաղաքային դուման յանձնարարեց վարչութեան, մշակել տեղեկագիր բիւրօյի մի նախագիծ Պետական Դումայի անդամների համար, և յայտնել կարծիքները, թէ ինչպէս պէտք է ընդունէ քաղաքը պատգամաւորներին:

Լրագիրների հաղորդած լուրը՝ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի—մինիստրների խորհրդի կազմից հեռանալու մասին, «Русск. Гос.» ասելով՝ ճիշտ չէ: Այս լրագիրը նոյնպէս հերքում է «Новое Время»-ի այն լուրը, թէ իբր թէ դասակարգային վերակազմութեան նախագիծը քննվելու է մինիստրների խորհրդում: Իրականութիւնն այն է, որ այդ հարցի առիթով ոչ մի մտադրութիւն չը կայ:

ՍՄՕԼԷՆՍԿ, 23 փետրվարի: Վերսկսվեցին գիւղացիական բանկին կից կազմած յանձնաժողովի պարապմունքները՝ մասնակցութեամբ հարկային տեսուչների, միջոցներ մշակելու՝ հողեր գնելու և գիւղացիներին վաճառելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 փետրվ.: Սենատը բացատրեց՝ թէ այն հաստատութիւնները, որոնց մէջ աշխատում են առնուազն 50 բանւոր, իրաւունք են ստանում օգտվելու ընտրողական իրաւունքով, միայն թէ ընտրվողները և ընտրողները լինելու են միայն 26 տարեկան բանւորներ, բացառութեամբ այնպիսիների, որոնց մասին ցոյց է դրված Պետական Դումայի համար դրված որոշումների 7-դ յօդուածի մէջ: Գործադուլներին մասնակցած բալտիական Պակօլօ—Ռիժսկի երկաթուղային 100 արձակված ծառայողները ընդունվում են վերստին: Կազմված է մի յանձնաժողով երկաթուղիների կառավարիչներից և զինուորական մինիստրութեան ներկայացուցիչներից՝ քննելու համար իւրաքանչիւր յանցանքը: Պետերբուրգի քաղաքային դուման միջնորդութիւն է յարուցանում թողնել Պետական Խորհրդի նիստերին և իր առանձին ներկայացուցչին, ի նկատ առնելով մայրաքաղաքի շահերի համառուսական կարևոր նշանակութիւնը, քանի որ մայրաքաղաքը խօսելու է Պետերբուրգի գաւառական զէմստվայի մասի կողմից միայն փետրվարի 23-ին կայացաւ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի նախագահութեամբ՝ բարձր մասնագիտական ուսումնարանական հաստատութիւնների պրոֆէսորների խորհրդակցութիւնը, քննելու համար դասաւանդելի երկրորդական առարկաների, դիպլօմների և պրոֆէսորների ընտրութեան հարցերը: Վճռված է վերացնել ստուգաքննութիւնը: Կարծիք յայտնվեց, թէ չը պէտք է պաշտօնների նախապատւութիւնը կապել դիպլօմների հետ: Պրոֆէսորների ամբիոնների տեղափոխման հարցի առիթով վճռված է՝ ամեն մի ազատ ամբիոնի համար մրցութիւն հրատարակել և քուէարկել ոչ միայն մրցութեան մասնակցել ցանկացողներին, այլ և ֆակուլտէտի անդամների առաջարկած անձանց: Ֆինանսների մինիստրի որոշման համաձայն՝ ծխախոտի և քիմիապէս մաքրած նաւթի վրա—պուդին 60 կոպէկ հաշւելով դրամ ակցիզի գործադրելու ժամանակը նշանակված է ապրիլի 1-ին:

ՓԱՐԻԶ, 23 փետրվարի: Պալատական շրջաններում տարածված են յամառ լուրեր, որ Ֆալիէրը կաբինէտի կազմելու գործը կը յանձնէ Բուրժուային, որը արտաքին գործերի վերաբերեալ հարցերում մեծ հեղինակութիւն է վայելում: Այսօր, պաշտօնական շրջաններում Ալժէսիրասի կոնֆերենցիայի ելքի առթիւ կասկած է տիրում:

ԱԼԺԷՍԻՐԱՍ, 23 փետրվարի: Կոնֆերենցիայի այսօրուայ նիստում Ռադօվիցը յայտնեց, որ Գերմանիան դէմ չի կանգնի՝ Ֆրանսիայի և Սպանիայի ձեռքով առանձին նաւահանգիստներում ոստիկանութիւնը հաստատելու գործին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 փետրվարի: Պետերբուրգի պալատի դատախազի օգնական Կուկուրանովը նշանակված է Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազ:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, 23 փետրվարի: Գրօզնայից գալու ժամանակ, ճանապարհին աբրէկները գերի վերցրին բժիշկ Ռեասէնցովին:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նովկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ց. Մ. ՉԻԳՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և ջղային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԴԶԷԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Հ. Գ. ՉԱՐԱՅԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԷՅԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԷՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Ի. ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Հիւանդները ([illegible]) և օգնութեան համար [illegible]:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին: Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան: Բարիատինսկայա փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տելեֆօն № 11.
(ա. օ.) 11—20

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեդեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանովսկայա փող. № 20 Վերայում, Սեփական տ., տելեֆօն № 791: (ա. օ.) 74—150

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամեն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչեա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 42—100

Բ Ժ Ի Շ Կ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կաղեսսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կաղեսսկի փողոցից № 2,
(ա. օ.) 98—300

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը: 58—100

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՀԱՍԿԵՐ
Մանկական ամսագրի յունվարի № 1, որի բովանդակութիւնն է
1. Ի՞նչ էր պատմում լուսինը—Անդերսէնից թարգմ. Լ. Մանուէլեան, 2. Փերի Ջէնիկի ժապաւէնը—տ. Զաւօի, 3. Տաւրիկի հէքիաթը, 4. Ում անելիքն է դժուար—Ղ. Աղայեանի, 5. Քեռի Սիմոնի նապաստակը—Ազատ Տէր-Բարսեղեանի թելադրութեամբ գրեց Սադղեան, 6. Բօբը-Մինինցի, 7: Թղթէ նաւակից մինչև ծառը—Վ. Փափազեանի, 8. Ի՞նչու հրեշտակը չիջաւ—Սաղաթեանի, 9. Տիգրան Երուանդեան—Ստ. Լիսիցեանի, 10. Մեռնող գիւղացի—բանաստեղծ Յար: Թումանեանի, 11. Արջը—Մ. Մուշյեանի, 12. Այլ և այլք. և 13. Զուարճալիք:
Նկարներ պ.պ. Ա. Եսեկեանի, Առաքելեանի, Գ. Երիցեանի, Ա. Շահմազեանի և Վ. Սուրէնեանի:
Մանկավարժական յաւելուած. Հենրիկ Վերնեյի «Երեխայի կրթութիւնը մինչև 6 տարեկան հասակը»:
Տարեկան բաժանորդագինն է 4 ր., առանց մանկավարժական մասի 3 ր., կէս տարվանը—դրա կէսը: Հրատար. սկզբից—5 ր.:

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ մասնագիտական բաժինը աւարտած
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ցանկանում է ունենալ դասեր դպրոցներում, կամ ընտանիքներում, բոլոր առարկաներից: Հասցէն՝ Николаевскій мостъ, писче-бумажный магазинъ С. Матинянца. 4—5

Լոյս տեսաւ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽԱՍՅԵԱՆԻ
Միևնոյն դագաղում
Պատկեր Բագուի կոտորածից բ. հրատարակութեամբ նահատակների երկու նկարով:
ԳԻՆԸ 7 ԿՈՊ.
Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրավաճառանոցը կամ հեղինակին: Հալաբար, Լազարևսկայա № 49:
Գումարով (առնուազն 100) գնողներին զեղչ 25—35%: Առանց կանխավճարի չը դիմել:
3—3

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (և.ո.)46—27

Բ Ժ Ի Շ Կ
Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը:
Վելեամինօվսկայա փողոց, № 22, Նաւտիկովի տանը:
(չ. ու. կ.) 9—15

Սարգիս Եսայբէգեանցը պատիւ ունի ծանուցանել հասարակութեան, որ նրա արհեստանոցում կան թէ պատրաստի և թէ անընդհատ պատրաստվում են չոր նիւթից
ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ
ԿԱՀԿԱՐԱՍԻՔ
պահարաններ, բուֆէտներ, հայելով պահարաններ գրքի, զարդերօրի պահարաններ, ծալվող սեղաններ, շիֆօնիեր և ուրիշ կերտուածքներ:
ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
Հասցէն՝ Վելիամինօվսկի, № 19, տուն Լօրիս-Մելիքեանի: (հ.ու.չ.) 3—3

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնէ
Բ. ԻՇԽԱՆԵԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓԱԶԵՐԸ
(Արտատպած «Մուրճից»)
Օտար խօսքերի բառերթով, մօտ 80—90 երես, գինը 15 կոպէկ, քանակով գնողներին զիջում կը լինի:
Դիմել՝ Թիֆլիս, «Մուրճի» խմբագրատունը, Գուտտենբերգ և այլ հայ գրավաճառանոցները: 8—8

ԼԷՕ
Ս. ՄԵՍՐՈՊ
(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի առիթով)
336 երես, գինը 75 կոպ.:
Դիմել՝ «Գուտտէմբէրգ» գրախանութը, Թիֆլիս. նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասական և ընթերցանութեան գրքեր:

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր,
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գիշ
Ալէքսանդրոպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրոպոլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

Съ 1-го марта 1906 года
начнетъ выходить въ С.-Петербургѣ ежедневная
политическая, экономическая и общественная газета
„СТРАНА“
подъ редакціей *Максима Ковалевскаго* и *проф. И. Иванюкова*
Девятнадцатаго февраля выйдетъ номеръ газеты, посвященной оцѣнкѣ главныхъ теченій русской мысли и жизни послѣ историческаго дня.
Подписка принимается съ 1-го Марта 1906 года,
УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Съ доставк. и перес. въ	12 м.	11 м.	10 м.	9 м.	8 м.	7 м.	6 м.	5 м.	4 м.	3 м.	2 м.	1 м.
Спб. и Россіи	12 р.	11 р.	10 р.	9 р.	8 р.	7 р.	6 р.	5 р.	4 р.	3 р.	2 р. 20 к.	1 р. 10 к.
За границу	24 »	22 »	20 »	18 »	16 »	14 »	12 »	10 »	8 »	6 »	4 » —	2 » —

Для учащихся въ высшихъ учебныхъ заведеніяхъ, сельскихъ священниковъ, учителей и учительницъ: на годъ—8 р., 10 мѣс.—7 руб., 6 мѣс.—4 руб., 3 мѣс.—2 р. 25 к., 2 мѣс.—1 р. 50 к. и 1 мѣс.—80 коп.
Подписка принимается въ главной конторѣ газеты
«СТРАНА», Невскій, 65, ежедневно отъ 10 до 5 час. дня. 2—3

Բ Ա Ց Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
1906 թ.
„ԱՇԽԱՏԱՆՔ“
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՒՂԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ՈՐԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼՈՒ ԱՌԱՋԻԿԱՅ 1906 Թ ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՑ
Ծրագիր՝ 1) Առաջնորդող յօդուածներ քաղաքական կամ ժամանակակից խնդիրների մասին. 2) Գիւղական կեանք և կարիքներ. 3) Գիւղական տնտեսութիւն և տեխնիկա. 4) Զէմստվօ և համայնք. 5) Գիւղական դպրոց, դատարան և ոստիկանութիւն. 6) Գիւղական պրօլետարիատի շուրջը. 7) Առողջապահութիւն և անասնաբուժութիւն. 8) Թղթակցութիւններ գաւառից. 9) Մամուլի շուրջը. 10) Պատկերներ և զրոյցներ. 11) Հարցեր և պատասխաններ. 12) Շուկայ և տեղեկատու և 13) Յայտարարութիւններ:
«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրօլետարիատի շահերին և կարիքներին:
Գաւառի և գիւղի հետ սերտ և կենդանի յարաբերութիւններ հաստատելը «Աշխատանքի» ձգտումն է:
Ուսուցիչները, գիւղական քահանաները և գիւղական ինտելիգենցիան «Աշխատանքի» թղթակիցներն ու կենդանի ոյժերն են լինելու:
«Աշխատանքին» աշխատելու հրաւիրված են որոշ ուղղութեան մարդիկ:
«Աշխատանքը» վարձատրելու է իր բոլոր մշտական աշխատակիցներին և գաւառական թղթակիցներին:
Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Ռուսաստանի համար տարեկան՝ 4 րուբ. —	Արտասահմանի համար տարեկան 5 րուբ. —
կէս տարին 2 » —	կէս տարին 2 » 50 կ.
ամիսը — — 40 կ.	ամիսը — — 50 »
հատով №-ը — — 10 »	հատով №-ը — — 15 »

Բաժանորդագինը կարելի է վճարել մաս-մաս. սկզբում 2 րուբլի, մայիսին՝ 1 ր. և սեպտեմբերին՝ 1 րուբլի.
1906 թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտ. 20-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը միանուագ, կը ստանան իբրև պրեմիա «Իրաւական պետութիւն» յայտնի գիրքը—80 երեսից:
«Աշխատանքի» բաժանորդագինը ընդունվում է Թիֆլիսում խմբագրատան մէջ, իսկ քաղաքներում նաև բոլոր գրավաճառների մօտ:
Հասցէն՝ Тифлисъ, въ редакцію еженедѣльнаго журнала „Ашхаданкъ“, Бебутовская ул. д. № 27: Արտասահմանից՝ Tiflis, rédaction de la revue «Aschchatank», Bebutovskaia 27.
Խմբագիր-հրատարակիչ՝ Լևոն Սրաբեանեան
(և. ո.) 11—12

Տպարան «ՀԷՐՄԷՍ» ընկ.

Элекропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15